

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 6
J U I N
1932
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՆԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՓՈԹԻ ՄԷՋ

Մտայլ ամպերը աւելի եւ աւելի կուտակուում ու թանձրանում են Եւրոպայի գլխին: Եւ մի-ա՞յն Եւրոպայի. Տոկիոյից մինչեւ Բեռլին, ու մինչեւ Նիւ-Եօրք ամբողջ տարածութեան վրա, միեւնոյն անստոյգ կացութիւնը տնտեսու-թեան ու քաղաքական փոխարարներու թիւննե-րի, միեւնոյն չփոթը մտքերում եւ միեւնոյն կասկածն ու վախը ապագայի համար:

Ի՞նչ է այս՝ դրամատիրական հասարակար-գի վերջնական փուլուումի նախօրեա՞կ, ռամ-կավարութեան անբուժելի հիւանդութի՞ւն, մարդկութեան բարոյական ու զաղափարական ճգնաժամ, թէ՞ մի ուրիշ, բոլորովին նոր ու պատմութեան մէջ դեռ չապրած երևոյթ: Բոլ-շելիզմ՝ Ֆաշիզմ, հիտլերիզմ ու ահա գերման-արդէն տեղաժ կարծած ինկերութեան հիւան-դագին պոռթկում, տիրող դասակարգերի դի-չատիչ բնազդների տարապայման սրում, միջ-պետական ազան մրցակցութիւն ու չուկաների որս, տնտեսական գործառնութիւնների խան-գարում ու համաշխարհային նմանը չտեսնած տագնապ, բազմամիլիոն աշխատաւորների գործազրկութիւն ու սովամահութեան սպառ-նալիք, պատերազմի ուրակական ամենքի գլխին եւ դեռ ուրիշ հանրո պատկերներ — իրօ՞ք աշ-խարհ արագ քայլերով դէպի համաշխարհային փլուզում է շարժում, թէ՞ մարդկութիւնը ա-կանատես է թէեւ ծաւալով ու խորութեամբ աննախընթաց, բայց ըստ էութեան սովորական մի ցնցումի, որին յաջորդելու է տնտեսական ու մտաւոր վերելքի, ընկերային ստեղծագործ-ութիւնի փթթումի մի նոր շրջան:

Թւում է թէ ո՛չ անյոյս յոռետեսութիւնը հիմք ունի, ո՛չ էլ անսահման լաւատեսութիւ-նը. աշխարհ չի երեւում դեռ հասունցած ըն-կերային նոր կարգի յաղթանակի համար, թէ-

եւ հինը սկսել է կորցնել կենսունակութեան նախկին զօրութիւնը: Այս հին ու նոր ուժերի, հին ու նոր զաղափարների ու հասարակական ձեւերի բախումի արդիւնք է, նախ եւ առաջ, այն համատարած քաօսը, որով բռնած է ամ-բողջ աշխարհ: Եւ եթէ ընկերային կեանքի զարգացումը չի բարձրացել այն աստիճանին, երբ նոր կարգը կարող է յաջորդել հինին, ո՛չ մի բռնի ոյժ՝ լինի նա պատերազմ կամ բոլ-շելիզմ՝ չի կարող ապահովել նրա յաղթանա-կը: Եւ կամ եթէ հին կարգը պատմութեան կողմից զատապարտած է կորստեան, ո՛չ մի հիտլերիզմ կամ ինկերական բռնաշրջում չի կարող փրկել նրա գոյութիւնը:

Կասկած չկայ, որ հին ու նորի պայքարը բոլորովին այլ ճանապարհով կընթանար, եթէ չլինէր պատերազմը իր յետփերասյլեան ար-հաւիրքներով: Ընկերային այն տենդը, որից ստաւապում է ներկայ մարդկութիւնը, առաւ անունը է ստանում պատերազմից յետոյ ստեղծ-ւած բռնատիրական եւ ընդվզեցնող պայման-ներից: Ազգային ու քաղաքական հաւասարու-թեան փոխարէն աշխարհի երեսին հաստատ-ւեց քաղաքական անհաւասարութեան եւ աղ-գային իրաւազրկութեանց ու ճնշումների մի ազդակող դրութիւն. ժողովուրդների բռնի բաժանում, արհեստական սահմաններ, միջ-պետական քաղաքական ու տնտեսական անան-ցանելի պատնէշներ, օտարակերութիւն, հա-տուցումների անունով պարտադրւած պատե-րազմական ահուկի ստուգանք եւ կրքոտ վէճ ու կռիւ աւարի բաժանման շուրջ, պարտածների ու զրկածների դժգոհութիւն ու ցասում, յաղ-թականների անդիլող կեցւածք եւ զինաթա-փութեան ու խաղաղութեան նշանաբանի տակ ռազմապաշտութեան խնայելի անում մի կող-

միջ՝ անարդար գոյվիճակը պաշտպանելու, միև կողմից նրան խորտակելու համար:

Ահա այն կարգերը, որոնք հաստատուեցին յետվերսայնան աշխարհում, եւ այդ կարգերի անառողջ հողից են ոյժ ստանում անմիջապէս բոլոր այն շարիքները, որոնցով պայմանաւորւած է մարդկութեան այսօրւայ կեանքը եւ այն հրատապ հարցերը, որոնք դուած են ազգերի առջեւ: Մինչեւ այդ հողը չմաքուի, ոչ Ազգերի Դաշնակցութիւնը իրական արժէքը կը ներկայացնէ, ո՛չ զինաթափութիւն տեղի կունենայ, ո՛չ հատուցումների ու պարտքերի կնճիւր կը լուծուի, ո՛չ խաղաղութիւն եւ սպառնալուծութիւն կը հաստատուի երկրի վրա եւ ոչ էլ եկող-գնացող խորհրդաժողովները որեւէ դարման կը գտնեն աշխարհի ցուր բուժելու համար:

Այդ հողի անմիջական արդիւնքն են եւ այն յուզումնային զէպքերը, որոնց ականատես ենք այսօր՝ Գերմանիայում: Գերման առաջաւոր ուսմկալարութեան եւ յետաշրջական ուժերի այդ բախումը գերմանական հանրապետութեան ներքին բնականոն զարգացման հետեւանքը է, այլ պայմանաւորւած է առաւելյապէս արտաքին հանգամանքներով: Հատուցումների եւ պարտքերի անհարկն բեռի տակ կորացած ժողովուրդը ա՛յդ ձեւով է մտածում ազատագրել ճորտային վիճակից: Եւ ինչկերների ու բարոնների վտանգը չեզոքացնելու միակ միջոցը, ի հարկէ, վերացումն է կամ զէթ զգալի մեղմացումը այն բեռի, որ դուած է գերման ժողովրդի վրա: Անարդար դաշնագրերի վերաքննութիւնը անհիմն պահանջ է Գերմանիայի համար, ինչպէս եւ պատերազմից անիրաււած ու զրկւած միւս ժողովուրդների, որոնք նոյնպէս հատուցման ժամի են սպասում:

Միեւնոյն այդ թունաւոր հողից սնունդ է ստանում եւ քեմալական Թիւրքիան, որի վարչապետը վերջերս կատարեց Մոսկւայից Հոռոմ աղմկալից ճամբորդութիւններ: Եւ պէտք է խոստովանել, որ Թիւրք դիւանագիտութիւնը բաւական յտասկտեսութիւն ու ճարպկութիւն յայտնաբերեց՝ միջազգային պղտորւած ջրերում յաջողութեամբ ձուկ որսալու համար: Մոսկւա, Հոռոմ եւ, ինչո՛ւ էլ, վաղը նաեւ Ժընեւ՝ Թիւրքը կարողանում է օգտագործել աշխարհում սիրող ընդհանուր շփոթը իր գոյութիւնն ու միջպագային կշիւր ամրապնդելու

համար:

Անտարակոյս, բոլորովին այլ կը լինէր եւ Թիւրքիայի ճակատագիրը, եթէ գոյութիւն չունենար թշնամանքը Սորհրդ: Միութեան եւ Եւրոպայի միջեւ, եթէ Իտալիան ու Ֆրանսան ուժգնորէն չմրցէին ազգեցութեան համար Մերձաւոր Արեւելքում, եթէ Փրանս-գերմանական հակամարտութիւնը այսպիսի սուր ստտիճանների հասած չլինէր, եթէ, վերջապէս, աշխարհ ապրէր աւելի բնականոն պայմաններում: Բայց եւ այնպէս, Ըսմէթ փաշայի Մոսկւայում ու Հոռոմում գտած խանդավառ ընդունելութիւնից եւ կնքւած դաշնագրերից ու համաձայնութիւններից, ինչպէս նաեւ նիւթական ավակցութիւնից սխալ է եզրակացնել, թէ Թիւրքիան տնտեսական ու քաղաքական վերելքի շրջանում է գտնւում: Թիւրքիայի այսօրւայ ոյժը Եւրոպայի թուլութեան մէջ է: Իրականում, Թիւրքիան հիւժող ներքին հին սխտերը ոչ միայն դարմանւած չեն, այլեւ շարունակում են աւելի ու աւելի խորանալ ու սարսաճել: Երբեք, գուցէ, քեմալական Թիւրքիան այնպիսի վտանգաւոր տնտեսական դժւարութիւնների եզրին կանգնած չէր, որքան այսօր, արտաքին յաջողութիւնների ու փայլի այս օրերին: Հէնց Ըսմէթ փաշայի Մոսկւա այցելելու պարագաները եւ խորհրդային իշխանութեան սեղանից ստացւած ողորմելի վըրանքները, հէնց բուլբուլիների զինուորական քաղաքականութիւնը կովկասեան ճակատում՝ պերճասուս ապացոյց են Թիւրքիայի ներքին թուլութեան:

Այսօրւայ այս հիւանդագին պայմաններում, բազմապիսի տագնապների լոյսի տակ, դժւար է չափել աշխարհի գործերի բովանդակ խորքը, ոչ էլ միջազգային շարժիչ ուժերի իսկական արժէքը որոշել: Շատ կաւէ արձաններ, մեծադուկ ժխորի մէջ, ամուր պողպատի պատրանքն են տալիս: Շատ իրական ուժեր սկարութեան գոյնով են երեւում: Իսկական ոյժն ու տկարութիւնը յայտնի կը լինի կեանքի վճռական վայրկեաններին: Մի բան, սակայն, պարզ է եւ անվիճելի. այսքան լարւած դրութիւնը չի կարող տեւել անվերջ: Աշխարհի գործերը պէ՛տք է փոխեն եւ փոխելու ճանապարհին են արդէն: Այս անարդար, անհանդուրժելի կարգերը պէ՛տք է վերացնեն: Եւ որքան սուր ու ցնցող լինի տագնապը, այնքան մօտ կը լինի վճռական վայրկեանը:

Գ Ե Ո Ր Գ Զ Ա Ի Ո Ւ Շ

(Մ Ա Ն Ի Ա Ն Բ Ս Ա Ն Հ Ի Կ Մ Ա Ր Ե Ա Ի Կ Ա Ռ Փ Ի Ի)

Գեորգ Չալոչը սպանեցաւ 1907ի Մայիս 27ին, Սուլուխի կուրսի մէջ:

Իր մահէն առաջ՝ ան դարձած էր իտէալ Ֆիտային, կարելի է ըսել՝ երկրի մարտական սերունդի առաջին զէմբը, որ Արարոյնն անմիջապէս յետոյ, խիղախ պատանի, կը նետէր յի-
զպիտական կուրսի բնօրինակ յանդգնութեամբ, որ շարունակեցաւ մինչև իր մահը: Իր երեսուժը կարծես կենդանութիւն տուած էր Հնադարեան հուշակ ունեցող միւս մեծ հերոսին, որ կը կրէր Գալլ Վահան:

Տարօնի աշխարհին մէջ հետզհետէ հասունցած կորուրի մարտիկներու խորունկ ու ներքին բաղձանքն էր նմանիլ այս առասպելական նոր Մասունցի Դաւթին, իսկ երկրէն դուրս եւսացող երիտասարդութիւնը, երբ ձեռք կանոնէր հրացանը, երևակայութեան մէջ առաջին անգամ Մովսեսարի և Տալարիկի անվեհեր ֆետային կը մարմնանար:

Իր կենդանութեան ժամանակ՝ մարտական յեղափոխութեան անընկճելի դաշտին էր, ու բոլոր կուռղիներն անոր նմանիլ, անոր համարի կը բաղձային:

Իր մահէն յետոյ, անկա մեր կուսակցութեան մեծ ու պղտիկ մարտիկներուն համար ֆետայական կուրսի դերմարդը նկատեցաւ, ու անոր անունով երդեցան, երբ պէտք եղաւ ընկերական ամենէն մեծ սրբութեան վրա երդելու:

Ահա այսօր, այս յեղափոխական անմահ զինուորի մահաւան ջանհնդակեանի է որ կը լրանայ, զինուոր մը, որ երկաթէ մարդ, քարէ ինչ կորուստ ստացաւ և փոթորիկի մը պէս անցաւ Հայ Յեղափոխութեան քսան տարիներու մէջէն:

Իր մահաւան ջանհնդակեանի՝ հատոր մը իսկ չկայ անոր յիշատակն արձանացնող. ու մեզ կը մնայ պարձեալ ապաւինիլ «Իրօչակ»ին, որ աւանդատունն եղաւ այնքան կորած հերոսներուն, — քանի մը գիծեր տալու Գեորգի կեանքէն ու դործէն, յիշատակը թարմացնելու ամենէն արի ու անվեհեր մարդուն, որ այսօր, աւելի քան երբեք, կը խօսի մեր նոր շարքերու մտքին ու սրտին:

Մ Ա Ն Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը . — Գեորգը ծնած է 1870ին (կամ 1871ին. ստորջ չէ ծննդեան թակամար) Մասնոյ Բաս-

նայ դաւանի Մըքրինի զիւղին մէջ: Գեորգի հայրը, Ալամ, զիւղի իշխաններէն էր, բարեկեցիկ և զօրաւոր ընտանիք մը կը սեպէր: Ունէր երկու հօրեղբայր, մէկը՝ քահանայ, և եղբայրներ:

Համաձայն իր մասին քաղաւած տեղեկութիւններուն, Գեորգը զիւղի ամենէն անհանգիստ տղան եղած է, միշտ բան մը աւելի ըրած է, քան զիւղի արդէն ծանօթ շարանճիութիւնները: Զօրք ու զօրաբանակի խաղեր, որսորդութիւն, կուրս լամուկներուն հետ, երբ առիթը ներկայանար:



Գիւղի մէջ մանուկ հասակէն ա և քն սովորած է իր քահանայ հօրեղբայրէն և զիւղի տիրացուներէն: Հայրը և հօրեղբայրները կը փախաբէին որ Գեորգը ուսումը կատարելագործէ ու քահանայ դառնայ, իսկ Գեորգը միշտ ըմբոստ էր իր ծնողներուն և չըջապատին զէմ: Մտղները մտածեցին զայն զրկել վանք մը, նախ՝ որպէսզի օտար մթնոլորտի մէջ զսպւի ու մեղմաբարոյ դառնայ, և երկրորդ՝ ուսում ստանայ և հակի քահանայ ձեռնադրելու:

Այսպիսով, 1886ի Մայիս 14ին Գեորգ փոխադրուեցաւ Մշոյ Ս. Առաքելոց վանքը, ու հոն մնաց մինչև 1888ի Մայիսի վերջը, ընդամենը երկու տարի:

Վանքի մէջ Գեորգ ուշադիր հետեւած է ուսման, բայց արդէն կայտառ պատանի, զպրոցէն դուրս ելած է անհանգիստ թափառող մը, զիկովար իր պատանի ընկերներուն, պաշտպան վանքի ոչխարներուն և հովիւներուն ու կուռղ վանքի չըջապատին մօտեցող թւար և թիւրք հովիւներուն հետ:

Ու այդ շրջանին, երբ Գեորգը արդէն 17 տարին լրացուցած էր, վանքի չըջապատին մէջ կը հանդիպի փախտական Արարոյնի և Լեւոնի, հոգեւին կը կապուի անոնց, վանքէն հաց կը տանէ անոնց թաքստոցը, կը դառնայ անոնց հաւատարիմ սուբհանդակն ու սօսանդակը, երբ անոնք կը մօտենան վանքին:

Այդտեղ, այդ երկու նախաբայար ու ինքնեկ ֆետայիներէն կը լսէ թէ անոնք Ընկերաբան գործով կը զբաղին, որ անոնք հայ ազգի թշնամիներուն զէմ կը կուրսի՝ Ժողովուրդը գերութիւնէն ազատելու համար:

Այդ շրջանին Գեորգի հոգին կը բռնկի Ընկերաբան գործով:

տանի, զպրոցէն դուրս ելած է անհանգիստ թափառող մը, զիկովար իր պատանի ընկերներուն, պաշտպան վանքի ոչխարներուն և հովիւներուն ու կուռղ վանքի չըջապատին մօտեցող թւար և թիւրք հովիւներուն հետ:

Ու այդ շրջանին, երբ Գեորգը արդէն 17 տարին լրացուցած էր, վանքի չըջապատին մէջ կը հանդիպի փախտական Արարոյնի և Լեւոնի, հոգեւին կը կապուի անոնց, վանքէն հաց կը տանէ անոնց թաքստոցը, կը դառնայ անոնց հաւատարիմ սուբհանդակն ու սօսանդակը, երբ անոնք կը մօտենան վանքին:

Այդտեղ, այդ երկու նախաբայար ու ինքնեկ ֆետայիներէն կը լսէ թէ անոնք Ընկերաբան գործով կը զբաղին, որ անոնք հայ ազգի թշնամիներուն զէմ կը կուրսի՝ Ժողովուրդը գերութիւնէն ազատելու համար:

Այդ շրջանին Գեորգի հոգին կը բռնկի Ընկերաբան գործով:

Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ե Ա Վ Ա Ն Ը . — Գեորգ 1888ին կը վերադառ-

նայ իր գիւղը. ժամանակ մը հոն կը մնայ և իր հօր հրացանն առած՝ անվերջ ոտորոտութեամբ կը զբաղէ և կը քաջախիբ գիւղի նորահաս երիտասարդները որ ապաւինին զէնքը: Բնկերութեան զապախարը որ խրատական Արաբոն իր ամենօրեայ մտածումները կը գրաւեն: Հօրը և հօրեղորթ խօսքերը մտիկ չի ընէր և կը շարունակէ իր կեանքը:

Օր մը պարզանցի ջերուտ աշիւթէն երկու հոգի կուգան Մըջիկով. կը մտնեն եկեղեցիի բակը և զարկերով ու փայտով վար կը թափան ընկողք ծառերէն: Գիւղացիները կը տեսնեն ու կը լռեն: Գէորգ չի համբերեր. կը յարձակի երկու ջերտերուն վրա: Կը սկսի գոտեմարտ մը. ջերտերը երկու հոգի և զօրաւոր, քնական է աւելի շատ կը հարածեն Գէորգը: Գիւղացիները կը դիտեն յար անհասարար կոխը և չեն մօտենար օգնելու Գէորգին: Այդ տեսարանէն Գէորգի սիրտը սիրտութեամբ կը լքեցի. հոգեկն կըմտասանայ գիւղացիներու սարկութեան դէմ: Ու այդ դէպքէն քանի մը օր յետոյ, կը թողու գիւղը և նորէն կը վերադառնայ Աւաջուց զանքը, Արարոյնի միանալու վերջնական վճիռով: Վանքէն կ'իջնէ դէպի Բերդակ, ճամբուն վրա կը տեսնէ Արաբոն չըջապատած ոտիկան գինւորներով, ձերբակալած դէպի Մուշ կը տանին: Կը փնտէր Լեւոնը ու չի կրնար գտնել: Յուսահատած՝ կը դառնայ Մըջիկով: Տունը արդէն ծուռ աչքով կը նային Գէորգի անհանգիստ շարժումներուն վրա: Հայրը որ քով օրտաղ էր, աչքերէն զրկւած էր և չէր կրնար գէնք գործածել: Երբ Գէորգ նորէն կը սկսի օրտորոտութեան, հայրիկ անոր վրա կը բարկանայ և կրնէ թէ այլեւս իր հրացանին ձեռք չպիտի տայ: Հօրեղորթը կը թէլաբքի որ քահանայ ձեռնադրի: Գէորգ հօր ընթացքէն կը դարձանայ և կը մեկնի Հաւլով՝ գէնքի դրամ կամ դէնք մը ճարելու համար:

1890 թիւական է: Գէորգը հազիւ վեց տմիս կը մնայ Հալայ: Հող կը հանդիպի հնչական Բուրատին որ Բնկերութեան գործով երկիր կը մտնէր: Հալայի սասունցիները գէնք մը կը դնեն Գէորգին, որ Մուրատի մեկնելէն տաս օր յետոյ ճամբայ կ'իջնէ դէպի Մըջիկով: Հազիւ երկու շաբթի կը մնայ հայրական տունը, ու կը մեկնի Կէպլիէ Գիւղան՝ միանալու Մուրատին և Տամատեանին: Լեւոնը նոյնպէս կուգայ և կը միանայ իրենց. փախստականներու առաջին կորիզը կը կայմիւր: Ռոմբը 12 հոգի էր կը բաղկանար:

Հոս կը վերջանայ Գէորգի երկու տարւան (վանքը թողնելէն յետոյ) ինքնազուրկ թափառական կեանքը, և Բնկերութեան պատանդական երանջները: Հիմա ան կը միանար Մուրատին և Տամատեանին, որոնք գործելու եկած էին Սասուն: Բայց Գէորգը արդէն քան տարեկան պատաստութի զինուոր մըն էր, գրեթէ երկու տարւան անցեալ ունեցող և նորեկներուն համար՝ անդնահատելի գործակից մը: Հրայրը Դաշուի չըջանը կը գտնէր և կայ սուներ այս նորակազմ կորիզին հետ:

Գէորգի գործուն ֆրատական կեանքը, որ կը սկսի 1890էն ու կերկարի մինչև 1907ը, պէտք է բաժնին 4 չըջաններու, ինքնաշատու դերով ու դիրքով:

Առաջին շրջանը (1890-1896).— 1890ին Գէորգը երիտասարդ նոր Արաբոն էր, անոր աշակերտը, և անիկ ներշնչւած Բնկերութեան գործով, երբ յեղափոխական որևէ կայակերպութիւն գոյութիւն չուներ: Երբ 1890ին միացաւ Մուրատին, Հրայրին և Տամատեանին, Գէորգը կը միանար ֆետայական գործին՝ հայ ժողովուրդի ապստամբութեան համար: Կը մնար հընչակեան դրօշին տակ, որ իրեն համար յայտնի էր Բնկերութեան գործ անունով: Յիշուց զիլաւոր կայմարկերպչներուն հետ՝ ան յանդուղն ու հաստամիտ զինուորն էր, միշտ գործի վրա, միշտ եռանդուն: Ու քան տարեկան Տասնակէն մասնակցեցաւ արդէն յայտնի կռիւներուն, օրհասիկ, 1891ին Սասուն կռիւներուն, որ զիլաւորարար ջերտը աշիւթէններուն դէմ էին և որոնց կը մասնակցէին նաև կառավարական զօրքերը:

Ատիկ յետոյ հետապնդեց Արաբոյի մասնիչը և օր մը չորս ընկերներով վար իջաւ Սասունէն Արկրեան գիւղը և մասնիչ գիւղացեալ Կրպօս սպանեց և վերադարձաւ Սասուն:

1892ի մասնակի կռիւներուն կը բերէ իր բաժինը, երբ Մուրատը արդէն սեկնած էր Կովկաս: 1893ին երբ կը գտնուէր Տաւրոսի, Սէմայի մէջ կը ձերբակալուի Տամատեանը. մինչև իր հասնելը՝ զայն կը փոխադրեն Մուշ: Հրայր այդ թղանկին կանցիի շարժման գլուխը և տեղի կունենան 1893ի մեծ դէպքերը Սասունը և Տաւրոսիի շըջաններուն մէջ: Գէորգ ամենէն յանուգուց կռիւները կը մղէ Տաւրոսիի դիմադրութեան տակ և իր համբաւը կը շինի արդէն: 1893ի կռիւներուն մէջ սասունցիները յաղթական դուրս կուգան: Աշիւթները պարտուած, իրենց վայրերը կը դառնան: Թրքական զօրքի բոլոր ջանքերն ապարդիւն կանցնին. հոկտեմբերին ձիւղով կը ծածկուի Սասունը և թշնամիները կը հեռանան բոլորտափոխ օճախէն:

1894ին Մուրատը Ռուսէն կանցնի Սասուն, իսկ Հրայրը Ռուսէն կը մեկնի Կովկաս, յարած դրութիւնը պարզելու, դէնք և օդուժիւն բերելու Սասունին, որ անխուսափելիօրէն կուի պիտի բռնուէր թրքական և քրտական ուժերուն հետ, որոնք նոր պատրաստութիւններու մէջ էին:

Մուրատը հազիւ հասած էր Սասուն և իր շուրջը հաւաքած Գէորգն ու միւս զինուորները, թիւով 12 հոգի, երբ Սասունը նորէն պաշարեցաւ: Այս անգամ թրքական զօրքը գերակշիռ էր: Սասունցիները ոտքի ելան: Մանթօք է 1894ի Սասունի պատաստութիւնը, որի զիլաւոր հետքը և ժողովրդական վարիչը Ենչուզի Գրգօն էր, իսկ բուռ մը ֆետայիները Մուրատի ղեկավարութեան տակն էին: Գէորգ բոլոր կռիւներուն մասնակցեցաւ: Եւ ամենէն վերջը, երբ ամէն ճակատի վրա պարտուեցան, Մուրատին հետ ապաստանեցան Հարթք թաղի տակը գտնուող ջարայրին մէջ:

Մուրատին և Գէորգի ձերբակալումը, որ տեղի ունեցաւ յիշեալ ջարայրին մէջ, սրտայոյց և պարծանքի արժանի դրուպ մը ուներ (Գէորգ իր իսկ ձեռքովը գրած է), ու կուզեմ հոս յիշատակել: Գարայրին մէջ մտած էին վեց ֆետայիներ, Մուրատ, Գէորգ, Աղամ, Կարապետ, Յովհաննէս և ուրիշ մը. հոն մտած էին նաև հինգ Երուտրիկցիներ, իշխան Գասպարին հետ: Երբ թիւրքերն ու ջերտերը չըջապատեցին ջարայրը, Գէորգ ուղեց կրակ բանալ, բայց Մուրատը արգիւնը, բռնելով թէ փամփուշտ շուկնէք և կռիւն անօդուտ է: Հրամանատարը կը պահանջէր անձնատուր ըլլալ: Գասպարը ձայն կուտայ ըսելով որ ինք և իր ընտանիքի անդամներն են ջարայրին մէջ և կը խնդրէ ծանօթ ջերտը մը բանակցելու համար: Բիւրտին կուտայ տաս օր ունի և կը խոստանայ երկու շորի ևս, որպէսզի երթայ ու համոզէ աշիրթապետը, որ հեռանան ու իր ընտանիքին ձեռք տան: Պայմանը չեն ընդունեն: Այն տակն Գասպարը նոր ներքներ կը խոստանայ և ջերտը իր հետ չորս տաւրոսիկցի դուրս կը հանէ, մէկը իր տղան, միւսները իր ազգականները, և հետուէն կրնէ ջերտին թէ՛ ստոնցի գատ կը մնամ ևս և իմ կինը, կը խնդրեմ որ այս յանձնած մարդիկս ինչ կուզէք ըրէք, միայն իմ ընտանիքիս խնայեցէք: Գէորգ կը յարարէ.— Գրասպարին ընտանիքը մենք էնք, բայց իր բոլոր գոհողութիւնները ապարդիւն սնցան: Վերջը բոլորն ալ կը ձերբակալուին, ծեծած և տանձանքի տաննեակ օրեք յետոյ կը բերեն Մուշ բանտը, անիկ կը փոխադրեն Բիթլիս, ու նորէն կը դարձնեն Մուշ:

Բանտին մէջ Գէորգը կը մնայ 20 ամիս: Այդ ամբողջ ժամանակաշրջանին միշտ կը մտածէ փախիւն և լեռը ապաստանել: Վճիռ կը արէ բանտարկեալներուն: Մուրատը 101 տարի, իսկ Գէորգը 15 տարի: Գէորգ թէև առանձին տեղ ըրած է, սակայն, կը ջանայ պատը ծակել: Կը նշմարեն և կը հանեն վերին յարկը: Մէկ ամիս յետոյ արդէն այդ նոր սենեակի

պատն ալ ծակած էր և հարորդակցութեան մտած Մուրաթին հետ, որ կը մերժէր դուրս գալ բանտէն: Ան դատով և քանտարկութեամբ կը կարծէր թէ պիտի կրնայ հայկական խնդիրը արձարծել: ցոյցի զարագահանութեան առաջին շրջանն էր: Մինչդեռ Գեորգը կը հաստատը կուրն և յարատև պայքարին, գէնջին ու սուրբորդն:

Գեորգի տեղը մէկ քանի անգամ կը փոխին, բայց ան արդէն բաւարար ծակեր բացած է: Վճռական օրը հեր կը հասնի, վերջին անգամն ըլլալով՝ նորէն ծակերէն թուղթ կը հասցնէ Մուրաթին, որ կը մերժէ և երթաք բարով կրէ: Գեորգը գիշեր, անձրատ օր մը ծակերէն կը կախօր բանտի պատերէն ու վար կիջնէ: Իր հետ դուրս կուգան Յովհաննէս (Փետայի) և ժողովուրդէն Աւօ Գոսպարեան և Պաօ Աւետիս: Կը կտրեն, կանցնեն ղէպի Առաքելոց վանքի տակը, կը մտնեն քարայր մը: Չօ օր անօթի, ծարաւ կը մնան հոն ու յետոյ կիցնին վանքը: Այս փախուստը տեղի կուսնեայ 1896ի գարնան, հասնաւար Մարտ ամսուն:

Անցեալ կուրններու և կազմակերպական աշխատանքը, ինչպէս նաև բանտի դասն փորձառութիւններով թրձած, հասուն երեսուսարդ մըն էր Գեորգը, թէև հազիւ 28 տարին բոլորած, երբ բանտէն հեռանալով՝ կը մտնէր յեղափոխական նոր-շրջանի մը մէջ, արդէն Դանակոյթեան դժուրն տակ, որ բարձրացած էր Սասուն, Հնկեբուքեան գործը շարունակելու համար: Իսկ Փետայի Գեորգին, ամենէն առաջ, հայ ազատագրական կուրն էր որ կը հետադարձէր:

Երկրորդ շրջան (1896-1899).— Գեորգ բանտ գտնած միջոցին արդէն տեղեկութիւն ստացած էր Արարի Սասուն գաւու մասին: Բանտէն կենդին անմիջապէս յետոյ բարձրացաւ Սասուն միասնաբար Արարիին: Բայց իր հասնելէն առաջ, Արարի Կէլիբեկզանի ճամբուն վրա, ձիւնի հիւսի տակ մնացած էր: Գեորգի հասնելէն յետոյ, երբ ձիւնները կը ջաշին Արարի և իր ընկերոջ դիակը կը գտնեն ու կը թողնեն: Սերոբ կիւած էր Սասուն և վերադարձած Ախլաթի շրջանը: Սասուն կը մտային խոսքը մը գիւղորդներ, որոնք կենթարկելէն Արարիին որպէս պատասխանատու գործիչի: Այդ գիւղորդներուն մէջն էր նաև Անդրանիկ: Գեորգ Կէլիբեկզանի մէջ կը հանդիպի Անդրանիկին, որմէ կը ստանայ գէնք մը: Անդրանիկ քանի մը գիւղորդներով կը մեկնի ղէպի Ախլաթ միասնաբար Սերոբին: Գեորգը կը մնայ Սասուն՝ իր հետ ունենալով Համբարձուսը, Ուրուխի Յարութիւնը, Չնցի Պետրոսը և Քոյոց Յովհաննէսը: Մինչև 1897ի վերջերս, մտտ երկու տարի, Գեորգ իր խմբով կը մնայ միակ, զուրկ նրթական միջոցներէ, միշտ մասնակուր ենթակայ և կը շարունակէ գործելը:

Այդ թեւականներուն Տարօն կը հասնի Գուրգէն, որպէս պատասխանատու գործիչ, հետզհետէ կը վերադառնան Սերոբը և իր գիւղորդները: Շրջանի մէջ կը սկսի կազմակերպական և գիւղորդական ետուն աշխատանք մը: Դաշտի և Սասունի կազմակերպութեան կօօնդակէ Հրայրը, որ բանտէն կիւած էր և կը մնար յարստի պարտաւորութեան մէջ շարաթ ներկայանալու կառավարութեան:

Գեորգ ժամանակ մը կրնկերանայ Գուրգէնին թէ՛ Սասունի և թէ՛ Դաշտի կազմակերպումը գլուխ բերելու համար: Սերոբ նորէն կը դառնայ Ախլաթ: Գեորգ կը մնայ Անդրանիկի և Գուրգէնի հետ միասն Սերոբի վերադարձը: Այս ժամանակաշրջանի բոլոր ղէպերուն կը մասնակցէ Գեորգը և եկող զացող շարժական խումբերուն համար՝ մնալուն հովանաբարը: Նա միշտ լեռներն է, գրկած իր գէնքը, քար մը՝ բարձի տեղ:

Սերոբի վերադարձէն յետոյ բոլոր գիւղորդներ կը համախառնեն. անոնց թիւը կը հասնի 17ի, բացի սասունցի և դաշտեցի այն գիւղորդներէն, որոնք օժանդակ ղերին մէջն էին:

Սերոբ այդ ժամանակ մեծ ջանք կը թափէ Սասունի ժողովուրդին մէջ հասնակաշրջաններու առաջ բերել և վերջ ապու աշիթեթական հակառակութիւններուն, որոնք տեղի կուենային առջիկ փախցնելու խնդրով: Սասունցիները կերբէրէն հնախանդիլ գրւած կանոններուն և ենթարկիլ յեղափոխական վճիռներուն: Այս շրջանին տեղի կուենայ գորախոս ղէպք մը, որ մեծապէս կանկալաւորայ Սերոբի և Գեորգի յարաբերութիւններուն վրա: Գեորգի հօրերայրը առջիկ մը կը փախցնէ Սասունէն (ընդհանուր սովորութիւն). իրեն դերը կը արւի յեղափոխական դատարանին, որպէսզի սասունցիները երկու մասի բաժնուած՝ իրարու դէմ չկուրնին: Սերոբ դատը կը տեսնէ համաձայն նախորդ որոշման: Բայց փոխական վճիռը կատարելու և յանցաւորը պատժելու, նկատի կտանէ Գեորգի պարագան և կարծես փափկախառութեան ղէպքը՝ Գեորգին կառավարի վճիռը տալ և անձամբ գործադրել: Գեորգը այս երկնտարներն կը վիրասուրի և շուրջեր ստանել որէն թերութիւն յեղափոխութեան ճակտին քանած: Առանց առարկութեան, լուր կը մեկնի իրենց գիւղը, իր սեփական հօրերայրը կտանէ զաշտի տակ, կիւրպորձէ յեղափոխութեան ղէպքը մէջուր, իր զայս անարդարութիւնը, և կը վերադառնայ իր ընկերներուն մօտ: Բայց անոնց միասնաբար առաջ եօթ օր և գիշեր անտունելու և ժայռելու մէջ կը թափառի վիրասուրած զայնի մը պէս: Ատիկ յետոյ պաղ էին իր և Սերոբի յարաբերութիւնները, թէև միշտ անձուկը ղէպի գործը:

Գուրգէն կը սպանէ Յրոնքի մէջ: Գեորգ և Անդրանիկը ուրիշ տեղ էին, երբ Կէլիբեկզանի մէջ լուսպանեցաւ Սերոբը: Ախլաթում 1895ին Տարօնի շրջանը կը գրկէր Գուրգէնի և Սերոբի պէս երկու անձան ու ժերէն: Զինուորները կը մնային Անդրանիկի և Գեորգի արամադրութեան տակ:

Երրորդ շրջան (1899-1904).— Այս շրջանը պէտք է բաժնել երկու ժամանակաշրջաններու: Առաջին երկու տարին, 1899-1901ին վերջը, Անդրանիկի ղեկավարութեան շրջանն է: Անդրանիկը և Գեորգը միասին կը տանեն գործերը: Գեորգը առանձնապէս շահագրգռուած չէ մինակը ղեկավարելու: Առհասարակ, անոր քակրողութեան էր ղեկավարութիւնը թողնելը դուրսէն կիւած ութի մը: Այդ ուղղութեամբ կը համազէ բոլոր գիւղորդները, որ ենթարկին Անդրանիկին: Անդրանիկ և Գեորգ կանցնին գործը: Սերոբի և Գուրգէնի կորուստով ժողովուրդը յուսաւորած էր: Գանի մը գիւղորդական հակահարածներ անհրաժեշտ էին, արամադրութիւնները բարձրացնելու և մասնակուր անձներու թէ՛ դաւանանքը և թէ՛ կառավարութեան անսանձ բռնութիւնները: Նախ՝ կը մաքրեն Սերոբը մասնուր և թունաւորող Աւէն իր սովորող ընտանիքով: Յետոյ կը շրջապանէ Սասուն և դաշտը՝ շրջանը վերակազմելու և ութ համախմբելու: Տեղեկութիւն կը ստանան, որ Պարի Պալի բէգը պիտի անցնի Մառնիկ սարէն: Գեորգ, Անդրանիկ, Սպալաւայ Մախար, մօտ 25 հոգիով կը քանեն յոնանցը՝ Սերոբի վրէժը լուծելու համար: Եւսեցնող հարւած կիջնցնեն Պալիին և իր զուրամներուն. կը ղլխատեն Պալիին: Դէպքը արաբի կը տարածէ ջերաւ և թիւրք բէգերու շրջանին մէջ, իսկ հայ ժողովուրդը հոնպպէս կը կապիլի ֆետայիներուն, որպէս պաշտպան շրջանի:

Տեղի կուենայ ինքզակի ծանր կուրք: Ամբողջ օր մը կուենէ և թնամիներէն բազմաթիւ զօհեր խիլէ յետոյ, Գեորգը իր ընկերներով կարատի ամէն կողմէն ղինքը շրջապատող զօքերէն, հարցքի տպաւորութիւնը թողնելով թնամիներու և հայ ժողովուրդին վրա: Ինքզակի կուէն յետոյ, Գեորգը առասպելային ֆետային էր, միշտ փայլուն աստղով:

Ատիկ յետոյ, Անդրանիկ և Գեորգ ամբողջ շարժական գիւղորդներով կը մտնեն Առաքելոց վանքը և կը

կազմակերպեն Առաքելոց վանքի յայտնի կոիւր, որ քաղաքական մեծ ցոյցի մը բնատրուութիւնը ստացաւ:

Գեորգ մինչև այդ մը ժամանակը իր 35 մեծ ու փոքր կոիւրներու և պատամարտութիւններու, և արդէն 12 տարիներէ ի վեր հայրուկ էր՝ միշտ յիշներուն մէջ: Միւս ժամանակաշրջանը 1902էն մինչև 1904ի Մասնոյ պայտամարտութեան վերջաւորութիւնն է: Այդ շրջանին տիրական դէմքը Հրայրն է: Սասուն և Մուշ արդէն ունին Դանակոյութեան Պատասխանատու Մարմինը Հրայրի, Վահանի և Նրկաթի գլխաւորութեամբ: Նոր գինւորական ուժեր կեդրոնացած են Սասուն և Մուշ դաշտը: Յեղափոխութիւնը լայն կազմակերպութեան ձեւ ստացած է: Չինւորական կազմը՝ կանոնաւոր բանակի մը կերպարանը: Գեորգ այդ կազմին մէջ պատկանելի խմբապետներէն մէկն է, որ սակայն, բոլորի ուշադրութիւնը իր վրա կը հրաւիրէ:

Այդ ժամանակաշրջանի գէպերն ու պատամարտական կոիւրները ծանօթ են արդէն: Գեորգ այդ վերջին երկու տարեան ընթացքին, մասնաւորապէս Մասնոյ 1904ի պայտամարտութեան մէջ ունենէն խոշոր դերը ըստանձնած է և մասնակցած է բոլոր կոիւրներուն, որոնք երկարեցան մինչև ամառը: Կառողները իջան դաշտը, նորէն բարձրացան Սասուն, սպա կրին իջան դաշտ, հաւաքեցան Կարաուս, ուր ստիկ ունեցաւ Կուրաուրի յայտնի յայթական կոիւր: Ու այդպէս կուրով, Ֆետայիներու ամբողջ խումբը անցաւ Վանի Ալթամարը: Այդ շրջանի վերջին կուրը Ալթամարի կոիւր էր, որոնց մասնակցեցաւ Գեորգ:

Հող, Ֆետայիները Վանի Գառ. Մարմնի Հետ խորրդակցութիւն մը ունեցան: Տարօնի շրջանը դատարկած էր յեղափոխական գինւորներէն: Սասուն մնացած էին Մակարը, Գալան, Ղազարը և սասունցի կազմ մը գինւորներ: Գեորգ իր դէմքը դարձուց գէպի դատարկած Տարօնը և ուղեց վերադառնալ ժողովուրդին մէջ, նկատի առնելով այն սարսափը, որուն ենթակայ էր հայ ժողովուրդը, Մասնոյ պայտամարտութեան պարտութենէն յետոյ:

Զարկար շրջանը (1904-1907).-- Այս շրջանը կարելի է կոչել Գեորգի ղեկավարութեան շրջան, ուր Գեորգ էր ամբողջ թափովը հրապարակ կուրայ, թրքական դաժանութեան կը հակադէմ յեղափոխական տեղորոշ և սարսափ միշտ բնակավայրերու և ցեղապետներուն ուսէն: Կարելի է նաև ըսել, որ ոչ մէկ ժամանակաշրջան բանակութիւնն այնքան դաժան եղած է, որքան այդ շրջանին, որ կերկարէր մինչև 1908ի Մասնապատմութիւնը:

Գեորգ Ալթամարէն կը վերադառնար ժոռ քան գինւորներով: Անոր կրկնկարմային իսօ, Մուրատ (վարդէնիսցի), Դրմերտու Արամը, Մօսօ, Ռաադիւզցի Վիլո, Մաչատի Աւետիս (յետոյ բունեցաւ), Մշեցի Եղօ (բունեցաւ), Արամ (Աւանցի), Իսօ (Աւանցի), Սուրբա (Աւանցի), Ռաադիւզցի Մօսօ, Ասատուր, Էրչակուր Սարգիս, Ջրհորցի Կարօ, Շամիրամցի Սո, ոն: Սասուն մնացած էին Սպալանցի Մակար, Գալան, Ռիհանցի Մարգիս (Թարթաթոյ), Շէլիցցի Ղազար, Մուրուր Կարապետ, յետոյ եկաւ Զօյան: Այս բոլորը կը համախմբէին Գեորգի շուրջը և ան կը հասնէր ամէն տեղ, չմեղեցող հակահարածըր կուտար բունակայիներուն, վերականգնելու ժողովուրդի տրամադրութիւնը, որ այդ արիւնքի ու հրեհի օրերուն միխթարած կը գզար իրեցինքը՝ կը գզար որ անտէր չէ և զահիճներն անպատիժ չեն կարող շարունակել իրենց ոճրագործութիւնները: Գէպը ատարի մը մինակ կը շարունակէր այս փոթորակի աշխատանքները, իր ինքնայատուկ շարժումներով, երբ 1905ի վերջերը հոն կը հասնէր նաև Թուրքներ, և 1906ի սկիզբէն Գեորգի հետ միասին կը շարունակէին յեղափոխական կազմակերպութեան և գինւորական գործերը:

Անկարելի է այս նեղ սրճակներուն մէջ մի առ մի

թել այս շրջանի Գեորգի գործունէութիւնը: Անշուշտ, որ մը սուտը հաստորով մը անոնք լոյս պիտի տեսնեն: մինչ այդ «Իրօրակ» ընթերցողներուն կը թելադրեմ գտնել ու կարգալի Թուրքի յուշերը «Հայրենիք» ամսապարհն մէջ, ուր Գեորգի գործունէութիւնը լայն շափով պատկերացած է:

Միայն այսպէս կարող եմ ըսել, որ այդ շրջանին Գեորգը ամէն տեղ էր: Ֆետայական շարժումը դարձած էր հարւածային, գէորգեան մեթոտներով, իսկ ինքը Գեորգը, կատարալի առասպելական ձեռք մը, որ ամէն տեղ ու ամէն վայրեան կրնար հասնել, սասանեցնել թիւանքն ու կեղեքողը, մասնինչ ու բունակար, հաւասարապէս ու անխնայ: Կառավարական բոլոր ուժերը բարւոյ էին բունեցու յեղափոխութեան ցուր, բայց անհնար էր, ու մասնաւոր՝ անդուստ:

Այս պայմաններուն մէջ թիւրք և թիւրք բեզերը զուլած էին, շատերը իրենց բարեկամութիւնը կառարակէին Գեորգին, ուրիշները, ստիպանք՝ մեղծ կը վարէին իրենց ենթակայ հայ զիւղացիներուն հետ: Զօրքերն ու ոստիկանները, շատ անգամ ձեւական հետապնդման կեղծիքն ու կը խնայէին իրենց զուրքը Գեորգի հարածէն:

Այս շրջանին Գեորգը ստեղծած էր հայ-քրտական բարեկամութիւն մը, որ հիմնւած էր փոխադարձ ուժին վրա: Գեորգը ոյժ մը կը ներկայացնէր, ու թիւրք ցեղապետները ստիպւած էին նկատի առնել:

Գեորգ այդ շրջանին, փախուսանք վիճակով աճունեացաւ Հեղինք վարչակի (Մասուն) աղջկայ՝ Եղսոյի հետ: Ունեցաւ գաւակ մը, անունը Վարդգէս: Հին գինւորներէն ոմանք դժգոհ էին Գեորգի ամուսնութենէն: Մասնաւորաբար հին Ֆետայի և փորձած Սպալանցի Մակարը, որ նոյնպէս հակառակած էր Սերբոյի Սօսի պատճառով: Բայց ինչկերները իրարու հետ կուղեկան ու շուտ հաշուեցան: Բոլոր ուժերը համախմբեցան թ մըն ալ, ժամադրութեամբ մը հաւաքեցան Սուլուսի, Մուշ դաշտին կեդրոնը, Եփրատի եզերքին: Այդտեղէն պիտի բաժնէին գանազան տեղեր, աշխատանքի նոր բաժանումով:

Կառավարութիւնը լուր կուտէ և այս անգամ իր ամբողջ գինւոր ուժերը Բօսէ Բինբաշի հրամանատարութեամբ ճամբայ կը հանէ Սուլուսի վրա:

Բօսէ Բինբաշին յայտնի դէմք մըն էր. խառաբոյ գինւորական (չէրքէզ), պարիշտ մարդ, հաւասարիմ սուլթանին, կուր մէջ խիզախ, բայց ոչ տմարդի: Ինտութիւններ և ոճրագործութիւններու՝ մասնակց չէր: Անեք յարգանք ունէր դէպի Ֆետայիները, բայց օրպէս գինւորական լաւ ալ կը կուր անոնց դէմ: Մօտ ութ տարիներէ ի վեր Բօսէ Բինբաշին Տարօնի շրջանին մէջ կուրէր էր Ֆետայիներուն դէմ և գիտէր անոնց ոյժը: Ան թրքական բանակի մէջ ազգային հերոս մըն էր, ինչպէս Գեորգը Ֆետայիներու բանակին մէջ:

Ու ճակատագիրը այս երկու հակաները, երկար տարիներու կոիւրներէն յետոյ, վերջին անգամ դէմ դէմի կը բերէր:

Սուլուսի մէջ Ֆետայիներու թիւր կը հասնէր 45ի, ժոռ 35 գինւորներ ալ տեղական ուժերէն հող հաւաքած էին: Հայ կառողները թիւր, ուրեմն կը հասնէր 80ի: Թրքական զօրքը՝ 2000 հոգի: Կէս օրին կը տեսնեն զօրքի երևումը երկու ջերմէթեր վրա: Սրբ ցեղեկով փախին անհնար էր. կուր կը դառնար անխուսափելի:

Ու տեղի ունեցաւ Սուլուսի կուրը, որ կարնի է նկատել Ֆետայական ամենէն մեծ կուրներէն մէկը, գրկախառն կուր պատերու և տանիքներու վրա ու Սուլուսի նեղիկ փողոցներուն մէջ. կուր մը որ տեսց մինչև գիշեր, ուր խաւարեցաւ Ֆետայիներու աստղը: Գեորգ սպանեցաւ: Ետն ճակատամարտին մէջ սպանեցաւ նաև Բօսէ Բինբաշին: Երկու հերոսները երկար

տարիներ իրարու դէմ ճակատեցան, միշտ գինւորական պատումով և միասին քաշեցան կուր բեմէն:

Այս կուսին մէջ սպանեցան անմասն Գալէն, Գէորգի սիրական Ֆետային և Յակոբ: Ռուբէն և ուրիշ ութ ընկերներ վերաբարեցան: Թրքական բանակէն սպանուած էին 120 գինւոր, թէև տողովուրդը 20(0)ի կը բարձրացնէր անոնց թիւը: Զօրքերը մինչև մուծի կոխելը չկրցան սիրջնակատօրէն գրաւել զիրը: Ֆետայիններ մուծէն օպտակով՝ էլան զիւրէն և իրենց հետ ազատեցին նաև տողովուրդը: Աղբերգական տեսարան մըն է Գալէի բնկերներու կողմէ ներթափ շուրթուած յանձնելու: Անելի ողբերգական է ծանր վերաւորած Գէորգի փոխադուծութիւնը դէպի եղեգնուտները, ուր մեռաւ և թիւրքերը զիսկը գտան յալորդ օրը:

Գէորգի վերջին խօսքը, ուղղուած Ռուբէնին (եբբ սիրտ կուտան Գէորգին թէ վերքը թևթև է) կրլլայ, չեմ գործս վերջացած է. եղածն և Վարդգէսը անտէր շթողուցին՝...

Ինչպէ՞ս կարիքի է շարունակել այս վերջին քանի մը տողը՝ մեր բնկերներուն հաղորդելու համար թէ Ֆետայինները ի՞նչ գնով անտէր շթողուցին եղածն և Վարդգէսը:

— Առումը քաշեցաւ լեռները: Եղածն և Վարդգէսը մնացին դաշտը և վտանգի ենթակայ: Ռուբէն խուժով կուզէ դաշտ իջնել Գէորգի պատիւը փրկելու: Ահա հրապարակ կուզայ Սպաղանաց Մակարը, որ թէ՛ Սեւորբի և թէ՛ Գէորգի հետ կուած էր անոնց կիներուն պատճառով: Մակարը կուզայ հրապարակ խոյի պէս ու կը ստիպէ՝ րոյր ընկերները, որ Գէորգի պատիւ պաշտպանութիւնը յանձնել իրեն: Կր մեկնի դէպի դաշտ: Փեթարի մէջ կը հանդիպի եղառոյն և Վարդգէսին: Հոն են շարք մը Ֆետայիններ Սասունցի Սանուկի և Իւրոյի հետ: Ու կը շքնապատուին Թրքական կանոնաւոր զօրքերին: Ֆետայիններու թիւը կը հասնի 18ի: Դաժան ու երկարատև կրիւ մը, լեռնային կտուի մը կը բացել Մակարի խուժքին և զօրքերու միջև: Մակարը կը սպանել երկար պայքարէ յետոյ, Շէնրզէի Սանուկի կը կուր մինչև վերջին փամփուշտը ու գնդակահար՝ ժայռերէն վար կիշնայ անդունդը: Շատերը վիրաւոր ու ճղկակոտոր՝ հաղիւ կազատին, ու սպաւոր կը վերադառնան Ռուբէնի օտ: Եղածն և Վարդգէսը կազատին տողովուրդին հետ խառնելով:

Գէորգի կինը և տղան Սահմանադրութենէն առաջ, գաղտնի ճանապարհով զրկեցան դէպի Պարսկաստան: Սահմանը անցած ժամանակ փոքրիկ Վարդգէսը մեռաւ: Եղածն Սահմանադրութեան շրջանին վերագար-

ձաւ Սասուն: Ապրիլեան եղեռնին կը գտնուէր Սասուն, և զոհեցաւ տեղահանուած բազմութեան հետ:

Գէորգը սպանուած էր: Թրքական կառավարութիւնը բազմաթիւ վկաններու առջև ցնամ էր անոր դիակը և թաղած Մշոյ կողք թաղել հայկական զերեզմանատունը: Բայց թէ՛ հայերը և թէ՛ թիւրքերը չհաստատացին Գէորգի մահան: Մանաւանդ հեռաւոր շրջանները: Մինչև Սահմանադրութիւն անոր սարսափը շատ տեղեր կը շարունակուէր, ու ամէն վայրիկեան կը սպասէին, որ տեղէ մը կայծակի պէս պիտի երևնար ու հալածէր...

Գէորգը ծնած էր գինւորական և յեղափոխական միևնոյն ժամանակ: Յեղափոխական տիպար մարտիկը զանաալու համար ան ունէր արողդ յեղի և յանդգնութիւն: Եթէ ինչքով տաղանդ մըն էր, յանդգնութեամբ՝ հանճարեղ էր: Որպէս Ֆետայի և առհասարակ որպէս պատերազմիկ Գէորգի գլխաւոր նկարագիրը արի յանդգնութիւնն էր, որուն կը միասնաբ խելքը և հեռուստութիւնը: Այսպիսով անոր գործերը մքննարար կը ստեղծէին անմիջական և հեռաւոր արդիւնքներ կուտային: Գործը կը գառնար մեծազօրութիւն, տասնակ հազար բազմութիւններու սիրտը կուռէր հարստութեամբ. արիւթիւնը կը ներարկուէր բազմութեան արեան մէջ, ու ընտիր երիտասարդներ կը կազմաւորուէին՝ երկաթեայ Ֆետայի դառնալու համար: Գէորգ սերունդը կը ստեղծէր, ու պէտք է ընդգծեմ, որ իր մահէն յետոյ, իր անունը և գործնական բարեփոխական խիզախ շունչ մը մնաց Տարօնի շրջանին մէջ, ու եղաւ երիտասարդութեան մարտական դարբնոցը:

Այս բանի մը հակիրճ տողերը հաղիւ աղօտ զարգափար մը կընան տայ այն փոթորակի կեանքին վրա, որ քան տարի Սասնոյ լեռներու և Տարօնի աշխարհի անվճար առիւծն եղաւ: Իսկ տարի ժայռերուն հետ նոյնացաւ, ու ազատութեան ժայռի անոր հացանի բերքէն դուռաց: Հայրանեցաւ բունակալութեան կողմէ, ու հայրանեց բունութիւնը: Օր մը հանդիստ շրքաւ, ու քան տարին անցաւ անոր վրայէն փոթորիկի մը պէս, սարտացուցիչ:

Անշուշտ, որ մը Գէորգը պիտի ունենայ իր կեանքին գիրքը, ու այդ գիրքը մեր նոր սերունդին համար պիտի դառնայ հայ յեղափոխութեան մարտական դադառալութեան դասագիրքը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Ա Ն Ո Ր Մ Ա Ս Ի Ն

(Գ. ՉԱՎՈՒՇԻ ՅԻՇԱՍԱԿՈՆ)

Գրիչս ձնուք առի պատմելու Անոր մասին, բայց որքա՞ն գժւար է գրել մարդու մը մասին, որ այնքան պարզ ու նախնական իր երևույթով, իրապէս վերլուծման չենթարկուող բարդ ու հանելուկային էր:

Այսպէս էր Գէորգ Չավուշը: Իրական և կատարելալուպ Շերտաները՝ այսպէս կը բնորոշին:

Նմաններու մասին երբ դեռ ոչինչ չես գրած, կարծես կապրին զեռ. գրելէդ վերջ կը հաշտուա Անոնց մահուան հետ և կը կնքես Անոնց դամբանը...

Անոր համար է, որ նահատակ իմ սքանչելի ընկերներու մասին չեմ ուզած գրել ոչինչ, որովհետև կուզեմ որ ինձի հետ մեռնին Անոնք:

Բայց մեր տարբարխա ու հայրենազուրկ սերունդներուն համար ուզեցի թողուլ փոքրիկ զբաղք մը Անոր կեանքէն, որովհետև գրի միջոցով վիճակած է անոնց

ճանչնալ ու ապրիլ իրական հերոսներու կեանքը:

1904ի ամբան սկիզբը, երբ մենք զբաղուած էինք (և զրեթէ լրացուցած) Վարդգէսի բանտի տակէն ներքնուդիկ պատրաստութեամբ՝ զինքը և իր ընկերները փախցրնելու համար, որմէ վերջ, որոշուած էինք արձագանք տայ Սասնոյ և Մշոյ դաշտի կոխուներուն, օր մը Աղթամարի մեր գաղտնի դործակալէն զիր մը կը ստանամ թէ՛ Անդրանիկը, և թէ՛ չեմ սխալիք, 130 հոգի հետ, հասեր է Աղթամար կողմին և ինձի կողմ կը հրաւիրէ... Պարզ էր ուրեմն, որ Սասունը պարտուած էր և մեր ինչները փամփուշտին սպառելով հեռացած էին:

Այդ ժամանակ քովս կը գտնուէր Քեռին, որ ուղեց ընկերանալ ինձի: Ալէսին և Մուռ Դաւթին հետերնիս առած, իրիկնամուտին ձիերով սրարչաւ մեկնեցինք

Ոստանի կանակով զկտի Խորզոմի ծովեզերք, ուր պար- մանաւորամ ինք զմնքի նաւակը աննկու:

Գլխեւան կհսն անց էր, երբ ծօնեցանք արին և պայմանական խարոյիք վառեցինք:

Սօս երկու ժամ սպանել վերջ թիբերու ճողփիւնի ձայնը ստինք, որոնք կը ձեռքէին խաղաղ ծովը և թիշ մը վերջ նշմարեցինք որւապիծըր ստապատանաւին: Զիրեք վերադարձուցինք Խորզոմ, բարկանք և զնեքրը ուերիտու մօտեցանք նախ, ուր Ծ-Յ սուեքնք ձեռքերը երկնցուցին և մեկի նաւը ստին: Սերաստացի Մու- բասն էր իր գլեւորներով: Անաղմուկ կը թիպարէին զկտի կողին և Մուբասր՝ Հոգեկան խոր թախիծով և մերթ վրաւոր ստիւծի անցոր մանչիւնով՝ կը պատմէր մեկ իրենց կոխեներու ու տառապանքներու մասին...

Արշալոյսի բացում չէր դեռ, երբ մեր ստապատա- նասը մօտեցաւ կողին աւաղանը սպին:

Ամխներ տեղ կատարի ու յուսանատ կուրծներու մէջին, հրկիւղով դիւղերու բացեղն ելած և իրենց Հա- րիւբարտ հարապաններու մտեքնուն սկիւնաստե՛ ա- Հարկու, բզկուած, բայց սպառազէն բաղմուքին մըն էր աղնէ՛ մուկնէն մէջ՝ սեղմւած սև ժայռերուն, ձուլւած անոնց հետ:

Եւ էր կը Համբուրէի արինն ու այրուցքի Հոտով այդ մարդկանց հետ, կրակ ու արեւն կը հոսէր կարծես անոնց աչքերէն, մարդիկ էին, որոնք կորցնել վերջ իրենց սրբազան երկիրը, կուզէին որ բար-բարի վրա շնայ այլ եւս այլ իբր այնաբարհին մէջ...

Մահան Հանդէպ արձամարհանք ունէին ամենքը և խոր վիշտ ու կատաղութիւն կը նմարէին անոնց դէմ- քերուն՝ հրաբուխէ ժայռիկը իսկ յաւիտ զոյնով ու Զե- րմով կատաղութիւն ու գայրոյթ իրենց դէմ, որ դեռ կապրին և ամենքի դէմ, որ չեն մեռած...

Իշխանն ալ Լեւոնապարէն կանչած էին. ինձմէ ա- տաջ Հասած էր:

Անդրանիկն էր աղնէս. մտահոգ ու լուռ, լուռ- թիւն, որ ամէն բան մէկէն կուէր թեղի — կորսնցուցած կուր, տեւրակ երկիր, կոտորւած Հարազատներ, ա- կողակող անարգարութիւնք, կշտամբանք թեղի, որ չես Հասած օգնութեան...

Կր դպայի, որ այդ մարդիկ պէտք է որ խօսին, կշտամբեն, գոռան, Հայհոյին, որպէսզի իրենց վիշտէն թիշ մը թեղի տալու հզօնաւարութիւնը ստանան. այդ- բանը պէ՛տք էր տալ անոնց...

Առաստ է: Ահա Մուբասր պողպատէ շարժական արձան մը. Սեպուրը իր պարթէ կատակով և դաժան նաշած թովը. Աւօն՝ այնքան միայնադձուտ, հեղ ու բարի աչքերով, որ սակայն, իր մէջ վրէժի անշնչի կրակը կը պահէր. Կայծակ Առաքելը՝ միակը, որ իր հեշտները, կատակն ու Հայհոյութիւնը թերին՝ աջ ու ձախ կը ցրէր. Սմբար, Մէյրօն, Զնդօն... ամենքը բոլորւած մեծ շրջանակով մը գետնին վրա, մաշած իմաստաւորակներով, հրապաններով ու ատրճանակ- ներով շնորհարարած՝ մեծ մասամբ սլառառտուն ոչ ծայրահեղորէն յոգնած:

Չինորական խորհուրդ է: Անդրանիկը, Իշխանը և եւ նստած ենք խոշոր ծառի բունի տակ, շրջապատւած մարտիկներով: Կր սպասենք, որ Անդրանիկը խօսի, մինչդեռ նա ար. միջոցին գլուխը բարձրացուցած, բաղմութեան մէջ մէկը կը փնտռէ՝ վերջապէս կը ձայ- նէ. «Գլխիդ լա՛ւ, ո՛ւր էս մնացեր, ստաջ՝ եկուր, էրեւոյ տեսնանք... Կարճահասակ, նիհար, գլուխը բաց մարդու մը ուղղւած էր այս բրաւէրը, որ անտարբեր նստած գետնին՝ մեկ կը դիտէր. «Հօտի արէ՛կ է», ը- սան մեղմ ձայնով մը: Անդրանիկը ելաւ, ձեռքն բռնեց և գրեթէ բռնի, բերաս թուլ նստեցուց: Գլխից Զա- վուշն էր, Մլոյ ստիւծը, Հանգարտ, կշտած շար- ժումներով, ինքնամփոփ և խոնարհ ու միշտ լուռ:

Կր ընկեր 1 Դուբան-Բարձրաւանակի վիճակը և ընկերը այտուհետեւ, 2. Կոր շարժումներ պէ՛տք է առաջացնել, թէ ոչ, 3. Խուճբին Հետադալ ընկերները:

Բոլորը այն կարծիքին էին, որ Դուբան-Բարձրա- ւանակը պէ՛տք է լքել բոլորովին և թողուլ որ ժո- ղովորը յուսալքի: Նոր շարժումներէ պիտի խուսա- փիւ, բայց ուժեր պէ՛տք է պահել հոն, է Հարկին յար- ձակումներէ պաշտպանելու ժողովուրդը: Պէտք է պատ- րասուել նաև Վասպուրականի լեւանային շղթաներու վրա՝ հաւանական շարժումներու Համար. խուճբին մնացեալ մասը պէ՛տք է Վանի վրայով անցնի Կովկաս: Ամենէն փափուկը Մուշ վերադարձող խմբին խըն- դիրն էր: Գիտակցաբար զէպի ստոյգ մահը մեկնելու որոշում էր առ:

Երկար, լուռ ու ծանր. բոլգներ էին որոշու- տւողներուն Համար. ո՛վ կը Համարձակէր իր ընկերո- ջը բռնելու զո՞ւմ՝ մեռնելու, ստանց որ ինքը ընկերա- նար անոր...

Որոշեցան, որ Սեպուրը Իշխանի հետ լեռ պիտի մեկնէին 20-25 հոգով. աչքի գարնոյ ուժերը Մուշ վե- րադարձել խոհեմութիւն չէր. անոնք ինձ հետ Վան պիտի գալին՝ Կովկաս մեկնելու. իսկ ո՛վ ուրեմն պի- տի վերադառնար... Երկար, երկար խիղճերու լուռ պայքար կար բոլորին մէջ: Ամենքը թեթեւալու Հա- մար, կը ջանային բան մը ըտել: Մահէն ապատուած, նորէն և անմիջապէս մահան երթալու տառապանքը կապրէին ամենքը: Երկիւղ չէր այլ, երբե՛ք այլ սարսափ՝ նորէն տեսնելու, նորէն կրկու և մահա- ւանդ ասրիւտ անցուցած ահաւոր օրերը...

Գէորգ Զավուշը այդ վայրկեանին ահա գլուխը բարձրացուց, զարձաւ զէպի դիւրորները և վճռական ու Հանգարտ ձայնով մը ըսաւ. «Ես կը վերադառնամ, մինակս այ...» օ՛ւր պիտի երթամ արդէն. տեղ չունիմ, իմ տեղը հոն է...» Այս արտասանելէ վերջ գլուխը կախեց, ժպտաց մեղաւոր ժայտով մը, որ կարծես թողութիւն կը խնդրէր իր ընկերներէն՝ զէպի մահ եր- թալու իր որոշման Համար:

Կորինն էր որ Հեռեկեցաւ անոր և երկտանեակ մարտիկներ:

Ու երբ Անոր ու Կորինի հետ կը յառաջանայի ժայռի մը ստորոտը՝ նկատուր դերենք մեր անգամ, մանկանք մայրտու մը գարձաւ զէպի ինձ. «Յեղափո- խութիւնը մինակ մեղմով չէ լինի, պարո՛ն, ի՛նչ կայ, լեցեր էք քաղցրը բզրց մարդիկը, քաղցնեքին խե- շկայ, կուզա՛ս Հեռու գողցի տանմ մեր երկիրը, տես ի՞նձ՝ անուշ երկիր է, ի՞նձ՝ ժողովուրդ ունինք... արժէ որ մեռնիք անոր Համար ու լուց:

Կատակ Համարեցի Զավուշի ըսածը այն տանն Ու այժմ ցաւով կը լիշնմ այդ վայրկեանը: Երնէ՛կ թէ երթայի. արժէր Անոր հետ մեռնել... Անոր մահով:

Ճամբու դրեց Անոր ու Կորինին, որոնք երջանիկ էին մեկնելու զէպի իրենց Հայրենի աւերակները, ո- րոնք դեռ ուր ծխային: Մնացող խումբը մահան յա- ղումով, գեղբորակային ճիգ գործ կը դնէր՝ շնտուե- լու մեկնողներու հետ առազատանաւին մէջ, որ կը դնար զէպի մահը:

Կզգի մեր երկօրեայ կեանքին մէջ, Գէորգը գլեւ- խուր և կիրոնական զէմքն էր ինձ Համար:

Այդ Համեստ, քաղաւ ու լուսկեաց մարդը երկու անխախտ ու Հիմնական յաստիութիւններ ունէր. առանց իր Հարազատ ժողովուրդի կեանք չէր կրնար բարեւել և երբե՛ն Նա շնորհուց այդ ժողովուրդը, իսկ մահանադ էր ըրած անվերջ ու անստանալ գոհաբերութիւնը իր աչքին գին չունէր, Ան չէր իսկ դիտակցէր թէ ինչն էր կուտար ինքը իր ժողովուրդին, և անոր Համար եր- րեք զգանապաշտելու իր կեանքի տառապանքէն, Հայա- ծանքէն և դաժան Եակապոսիցին:

Չեքեթային Հերոսի Կերպարանք էր առած Ան ժողովուրդի աչքին, կը Համարէին անխոցելի և ան- մահ: ու երբ մեռաւ, Ան չէր մեռած ժողովուրդին Հա- մար:

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

ՌԱԸԱՌԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

II

1921 թ.ին Պարսկաստանի քաղաքական կեանքը մի նոր փուլի մէջ մտաւ: Անգլիացիները, որ մինչ այդ, 1920ի վերջին, աւելի խտացրել էին իրենց ազդեցութիւնը Պարսկաստանում՝ միաժամանակ վտարելով նախկին ռուսական ուժերը Ստարոսելիկու գլխաւորութեամբ, 1921ի սկզբին իրենց այդ յարձակողական քաղաքականութիւնից նահանջելու տրամադրութիւններ ցոյց տւին: Այդ որոշման մէջ զիջ դեր չխաղաց և այն վճռական դիրքը, որ բռնել էր Խորհրդային Ռուսաստանը, որի հետ Անգլիան չէր կարող մտնել ուղղակի պատերազմի մէջ, մի ժամանակ, երբ բիտանական դոմինիոնները դէմ արտայայտեցին պատերազմին, երբ միաժամանակ հնդկական շարժումները զնալով աւելի լուրջ բնաւորութիւն էին ստանում, իսկ Ալիդանիստանը և Քիրքիան երևում էին աւելի զէպի Ռուսաստանը թէքելու հակամէտ:

Անգլիացի իր ազդեցութիւնը պահպանեց իր գործերի հետադարձ յետադարձ Սր Պերսի Կոկրի յաջորդ դեպքան նորմանի օրով: Վերջինս կարողացաւ դրանք բանաստեղծ և «Ֆրանզ» թերթի խմբագիր Ջիւէդդիմ սո-Փարաքարայի համակրութեամբ, որ ցանկանում էր անգլիացիներին օգնութեամբ վտարել բոլոր անարժան քաղաքական գործիչներին և կենտրոնական մի ուժեղ իշխանութիւն հաստատել երկրի ժայռաքաղաքում:

Այդ օրերին ահա քաղաքական ասպարէզ իջաւ Պարսկաստանի ներկայ շահը՝ իրականացնելու համար 1921 թ.ի փետրուար 20-21ի ծանօթ պետական յեղաշրջումը, որից յետոյ Ջիւէդդիմ Քարաքարային կազմեց առաջին կառավարութիւնը:

Կուսակցական կեանքը այդ շրջանից նոր թափ առաւ: Պարսկաստանում: Այդ շրջանից էլ պատկանում պարսկական առաջին Սոցիալ-դեմոկրատական (Իդու-միայում) կուսակցութեան կազմակերպումը, դեմոկրատների նախկին պարագլուխ Սուլէյման Միրզայի առաջնորդութեամբ: Սա աշխատում է նախ միացնել անգլիացիներին ժամանակ ցրւած նախկին դեմոկրատ կուսակցութեան ձախ տարրերին այս նոր կուսակցութեան մէջ՝ մի շաբէ յանրումներ մտցնելով (բանտորական օրէնքի կապակցութեամբ) նրանց ընդգրկած ծրագրի վրա: Այս կուսակցութեան կազմակերպման նախաձեռնող խմբակի մէջ մտան բացի Սուլէյման Միրզայից և Ֆերդոսին («Քոմիսիանի խմբագիրը»), Լարիջանի և այլն: 1922թ. մայիս ամսին Հրաւիրեց այս կուսակցութեան առաջին համագումարը, որից ընտրւած կենտրոնական ժարմնի մէջ մտան Գ Հոգի՝ Սուլէյման Միրզայ, Սոսուլատ, Ֆերդոսի, Գիվէշի, Լարիջանի, Արդարիլի, Փարւարի և այլն: Համաձայն համագումարից հաստատուած կանոնադրի Ս. Գ. կուսակցութեան շարքերը կարող էին մտնել միայն սեփական աշխատանքով ապրող անձեր. ընդհանրապէս, կալւածատէրեր և ուրիշի աշխատանքի չափազործու-մով ապրող զանազան անհատներ տեղ չունէին այս կուսակցութեան մէջ:

Համագումարից հաստատուած ծրագիրը բովանդակում էր բանտորական Հարցին վերաբերուող 16 կէտառաջին հերթին պահանջում էր 8 ժամանա աշխատանքի օր, ապա անչափահասաների համար գիշերային աշխատանքների արգիւթ, յուլութեան շրջանում բանտորուհու աշխատավարձի ապահովում, գործարանների և փանդան ձեռնարկութիւնների աշխատանքների և փա-

ձատրութեան վրա պետական անմիջական հսկողութիւն, բանտորական տնրի հիմնում և այլն:

Հողային հարցի առթիւ կուսակցութիւնը կանգնեց առատական իրաւակարգի և հողային յարաբերութիւնների բացարձակ վերացման պահանջի վրա՝ ազգայնացում (բունի դրաւում), ի բաց.տեսալ մանր հողատիրութիւնը:

Իր կուսութեամբ այս կուսակցութիւնը աւելի ազդեալին բովանդակութիւն ունէր և պաշտպանում էր Պարսկաստանի տնտեսական ու քաղաքական կատարեալին ճշտութեամբ կեանքի գաղափարը:

Մինչ այդ, սակայն, ընկել էր Ջիւէդդիմի կառավարութիւնը իր չափեց աւելի անգլիաաբիութեան համար և իշխանութիւնը կենտրոնացել Ռիգա խանի ձեռքը, որ կողւած էր հանելու այս երկիրը ներքին ահաբառ քառսից և յետպատերազման շրջանում ստեղծած քաղաքական ծանր կացութիւնից:

1921թ. յունիս 22ին բացւել էր նաև չորրորդ Մաշիքը, որ առաջին հերթին թնդանութիւնի որոտման հետ թողեց անգլիապարսկական դաշնագիրը: Բաց այլ շրջանում հանրութեան ուշադրութիւնը կենտրոնացել էր երկրի նոր առաջնորդի վրա, որ պարսիկ ժողովուրդը միանգամայն նոր ճանապարհներով վարելու գաղափարն էր յղումում, չնայած որ կուսակցութիւնները, ինչպէս և Մաշիքը դեռ բոլորովին չէին կորցրել իրենց նախակուսութիւնը քաղաքական կեանքում:

Ռիգա խանի բարենորոգչական առաջին փորձերը, սակայն, իրենց անմիջական հետևանքն ունեցան նաև յետադէմ ուժերի գործնապարհում ու կազմակերպութիւնը: Դրանցից ներկայ նիւթի կապակցութեամբ պետք է յիշել Մէքարը Էլ Բախտիար լլԱսող Բախտիարի կուսակցութեան ծնունդը: Երեսուսարդ բախտիարցիների այս կազմակերպութիւնը, որ մեծ մասամբ բաղկացած էր խանական տարրերից և մեծ հողատէրերից, անգլիական մութ աշխատանքների արդիւնք էր: Պաշտպանելու համար իրենց նախահորեր անգլիացիները Հարաւային Պարսկաստանում կազմակերպել էին իրենց սեփական բանակը մեծ մասամբ բախտիար ցեղերից՝ այդ ռազմական ուժերի նարհու իրենց ազդեցութեան առկ ստեղծելով և կենտրոնական իշխանութիւնը: Երբ Ռիգա խանը իր բարենորոգչական առաջին փորձերի հետ ձեռնարկեց և պարսկական սեփական բանակի կազմակերպութեան՝ իր հանդէպ գտաւ անգլիական գիւլւած ուժերը, որոնք ոչ ցանկանում էին ցրել և ոչ էլ միանալ պետական չորքերին: Ընդհանրապէս, անգլիացիները անյաջողութեան մատնելով անգլիապարսկական դաշնագրի մէջ, սկսեցին հովանաւորել բախտիար ցեղայականների անջատական ձգտումները՝ նախաին այդ հարուստ շրջանը Պարսկաստանից բաժանելու նպատակով: Իր հերթին «Երեսուսարդ Բախտիարցիների» կուսակցութեան կազմակերպումը, ինչպէս և այդ ցեղերի անջատական ձգտումները պայմանաւորում են Ռիգա խանի ծայրափառանքի կիսանկախ առատականութեան հանդէպ ընդգրկած ներդրոծ քաղաքականութեամբ:

Կենտրոնական իշխանութիւնն այսպիսով երկրի նախաձեռն քառսի հետ իր դէմ գտաւ նաև ծայրազաւանների աւատականութեան կազմակերպած ուժերը, ինչպէս և կր տեսնեց այս երկրի հարաւում անգլիացիների հովանաւորութեամբ, իսկ Հիւսիսում՝ Խորհրդային Ռուսաստանի օժանդակութեամբ:

Սակայն, ինչպէս իրենց սեփական բոլոր ջանքերը -

նոյնպէս և օտար ուժերը այլ ևս անկարող եղան փրկելու աւատականութիւնը և միւս կիսանկախ խաները ազգային կենտրոնական իշխանութեան ուղեւորող ոյժի հարաւանդից: Պարսկական առաջին յեղափոխութիւնը շնորհիւ արտաքին յետադէմ ուժերի միջամտութեան և իր անկարգութեան ընթացքում: Վերջին համաշխարհային պատերազմը ոչ թիւսգում յատկապէս աւելի ամբացրեց իր դերքերը և միայն իր արդեւորութիւնը տարածելով դէպքի կենտրոնական իշխանութիւնը՝ ենթարկեց վերջինիս իր անմիջական հակակշիռին: 1914-1921 թւերին աւատականութեան տիրապետութիւնը հասաւ իր գագաթնակէտին:

Քաղաքական այս արտակարգ յտանջիմութեան ճիշտ հակառակ աւատականութեան տնտեսութիւնն իր վերջին հոգեկարգել էր սարում: Ճարտարային փուլգումը հասել էր իր բնական հանդուանին: Ընդհակառակը, քաղաքը մտանկացող այս դասի դիմաց անցնելով համաշխարհային պատերազմի շրջանում իր ծանր տաղանապը՝ պատերազմի վերջին սկսեց արագ կերպով վերադարձել իր կորցրած դիրքերը: Միաժամանակ ընդհանուր պատերազմի ծանր հետևանքները, հարեան երկրի աղլւած ընկերային և յեղափոխական խոր ցնցումները աւելի էին հաստնացրել պարսիկ ժողովրդի ազգային վերածնութիւնը: Հողերու և տնտեսական այս տարերային ուժերի առաջ աւատականութիւնը իր սնունդի նիւթական ու բարոյական հիմքերով ստեղծեց սիրտի: լինել տեղի տալու:

Չորրորդ Մաջլիսի գործունէութեան վերջին (ցրեց Ռիդա խանի մի շարք բարենորոգումներին դէմ լինելու պատճառով) հնդկերորդ Մաջլիսի թաղման շրջանում (11 փետր. 1924) կենտրոնական իշխանութիւնը յենամոծ Ռիդա խանի վրա՝ արդէն հակակշռել էր իսնական յետադէմ տարրերին: Նախ՝ այս նոր խորհրդարանի մէջ, որի անդամների թիւը 121 հոգի էր, ծախ տարբերը, որոնց առաջնորդն էր Ասլիքյան Միթրան, մեծամասնութիւն էին կազմում: Ընդհակառակը, Չափաւոր-պահպանողական տարրը մնացով փոքրամասնութեան մէջ՝ կաւամ էս-Մայրամէի առաջնորդութեամբ ընդդիմադիր դիրք է գրաւում խորհրդարանի մէջ:

Հնդկերորդ Մաջլիսի քայքայուց մի քանի ամիս յետոյ, սկսում է և Եէյի իսլամի անշատողական շարժումը անգլիական սաղաթանքերի ազդեցութեան տակ: Այդ փոսնգաւոր շարժումը, սակայն, ճնշում է գարմանակի արագութեամբ և վերջնականորէն վերացում Պարսկաստանի համար շարքից գարմած այս ուժեղ աւատական կազմակերպութիւնը: Այս կարևոր դէպքից յետոյ պարսկական աւատականութիւնը կորցնում է իր անկենսական յենարանը և ստիպւում գլուխ ծռել նոր իշխանութեան առաջ: Իրօք, շատ կարևոր է հինդկերորդ Մաջլիսի շրջանը Պարսկաստանի վերջին յեղափոխութեան պատմութեան համար: Այդ շրջանում ահա մեր ծանօթ պատասխան կուսակցութիւնները համախմբում են Ռիդա խանի շուրջ՝ նեցուկ հանդիսանալով նրա ձեռնարկած բարենորոգումներին և Ղաջաբների տան դէմ վարած պայքարին:

Հին Ղաջաբների առճիմ անկման և նոր Փահլաւի առճիմ հաստատման շրջանում պարսկական կուսակցութիւնները անցնելով երկրում տեղի ունեցող ազգային-քաղաքական և ընկերային անասխնեթաց յեղաշրջման միջոց և երեքն հերթին ենթարկւելով զանազան փոփոխութիւնների՝ հինդկերորդ Մաջլիսի վերջին շրջանում հետևեալ պատկերն էին ներկայացնում.

ա. Ազադիխան (Ազատութիւն) — 14 հոգի, Սուլէյման Միրզիի գլխավորութեամբ: Մրան նախկին դեմոկրատների ճախ թեւն են, կազմակերպւած ճախ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան մէջ, ապա 1925ի աշնան ընդունեցին այս նոր անունը:

բ. Խորիթ (Ազատութիւն) — 12 հոգի, Բալսնամէի գլխավորութեամբ:
 գ. Միլլիան (Ազգայնականներ) — 4 հոգի, Դաւեթի գլխավորութեամբ:
 զ. Թէջըիդադ (Բարենորոգչականներ) — 12 հոգի,
 Թէզալոյի գլխավորութեամբ:
 հ. Թարաքի հախ (Յառաջադիմականներ) — 6 հոգի, Մալեզ օտ Թոքարի գլխավորութեամբ:
 Վ. Քիւան (Վերել) — 11 հոգի, ազգայնական ձգտումներով տողորած առևտրական հողատէրեր, կառուց շիա աւանդութիւններին:
 է. Թէֆֆաուդ (Բարեշրջականներ) — 11 հոգի, Եէյի օր Իաֆ և Սէիդ Հասան Օջախի գլխավորութեամբ: Մեծ հողատէրերի և կառւածատէր հողերականութեան այս խմբակը կազմած էր 1924ի դարնան:
 ը. Ահալիաք (փոքրամասնութիւն) — 14 հոգի Սէիդ Հասան Մորդէրի և Միրզա Հաւէ Ալտիսիի գլխավորութեամբ: Գերական կառւածատիրական այս խմբակը Մաջլիսի աջ թեկն կենտրոնական տարրն էր կազմում:

Յիւզուկ կազմակերպութիւններից բացի Մաջլիսը ունէր և կոստիտն խմբակցութիւն — Խաթեֆագ, 9 հոգուց բաղկացած:

Վեցերորդ Մաջլիսի ընտրութիւնների ժամանակ, 1926 թ. մարտ-ապրիլ ամիսներին, երևացին մի շարք ուրիշ կուսակցական խմբակցութիւններ, որոնցից, օրինակ, Իրան Զաւամ (Իրխասարդ Իրաւը), «Մէրաքը Ել Իրամ Թրաղութեան բարեկամների միութիւն», Իրխասարդ Ընկերակցականներ Իխաթիան և այլն: Մրանցից մեծ համատու կերպով կանգ կառնեց Իրան Զաւան կազմակերպութեան վրա, որովհետև մնացածների ծաղումը կապուծ էր ընտրութիւնների պայքարի հետ՝ որանցից յետոյ կրկին անյայտանալու պայմանով:

Իրան Զաւամ կուսակցութեան Հիմքը դրեց 1921 թ.ին եւրոպական կրթութիւն օնեցող մի խումբ պարսիկ մտաւորականների կողմից և սկզբից մինչև այսօր պահպանել է մշակութային կազմակերպութեան հանգամանքը: 1926 թ.ի ընտրութիւններին նա անմիջական մասնակցութիւն բերել երկրի քաղաքական գործերի մէջ իր թեկնածուների ցանկը ներկայացնելով խորհրդարանի ընտրութիւններին: Այդ տեսակէտից Իրան Զաւամը ստալինը հանդիսացաւ պարսկական կուսակցութիւնների մէջ, որ առաւմէին անհատական թեկնածուութեան եղանակին, դրա տեղ առաջադրելով կուսակցականորէն հանդիս գարու ձեւը, որովհետև անհատը ապաւնեւած է միայն իր անձնական համբաւին, որ քաղաքական գործունէութեան համար որոշ արժէք ներկայացնելու հետ ունի իր յոյժ հետևանքները, մինչև ընդ որս գիմաց կուսակցութիւնները միայն կարող են ունենալ յատակ ծրագիր իրենց վրա վերցնելով նաև պատասխանատուութիւնը ներկայացրած թեկնածուների համար*:

Վ. Ջ. Քի ջաղաքական և տնտեսական պահանջների մեծ մասը ինչպէս, օրինակ, կապիտալիստներին վերացումը, մաքսային և նեկտարական անկախութիւն, արդի օրէնսգրիտութեան կիրառումը երկրի դատական վարչական կենտրոն, կանանց հաստատութիւն, ուսանողների առարկում Եւրոպայ, բարձրագոյն դպրոցների հաստատում երկրի մէջ և այլն, կառավարութեան կողմից կամ կիրականացել և կամ իրականացման ճառապարհին է: Մշակութային պահանջները մէջ է մըտ-

* Այս տեսակետն է պայտպմամ կուսակցութեամ նախագահ պրոֆ. Ալի Ակբար Միսախի և իր վերջերս հրատարակած գրքում. «La Perso ou contact de l'Occident», Paris 1931, էջ 226:

նում և արարելն տառերի փոխարինումը լատիներէնով, որ աւելի յարմար է նկատում պարսկերէրի հնչանաբանութեան համար քան է արարելէնը: Այդ ապացուցանելու համար տ. Զ. քը հաստատարեալն է 1930/ից սկսած լատիներէն տառերով նամակներ: Այս կուսակցութիւնը ընկերային առանձին արմատական ծրագիրներ չի առաջարկում, մե, հակապակ իր ազգայնական բովանդակութեան, ոչ մի կապ չունի ֆաշիստական գաղափարներէ հետ և աւելի շուտ դեմոկրատիկ ձեռնարկով է սողորւած:

Բացի ընդհանուր քաղաքականութիւնից, անհրաժեշտ է կանգ առնել և կղերական կազմակերպութիւնների վրա, քանի որ հողերականութեան դերը առանձնապէս մեծ է եղել Պարսկաստանի աղջային կենտրոնէ: Յիշենք, թէկուզ, պարսիկ կղերականութեան կատարած խոշոր աշխատանքը սահմանադրական պայքարի շրջանում: Առանց զբաղելու աւելի հին շրջանի իսլամական քաղաքական կազմակերպութիւններով՝ տանք այստեղ միայն ներկայ դէպքերի հետ կապուղ պարսկական կղերական կազմակերպութիւնների ցանկը: Մասնացի առաջին տեղը ընունւմ է.

Տերդէ էլ Զաքարի կազմակերպութիւնը, որ հիմնւել 1918ին: Կուսակցութեան տալիսարդն էր Սէյիդ Մօսլէմ, որ հետագայում դարձաւ անդլեպարսկական ծանօթ դաշնագիրը ստորագրող Վուսազ էզ Դովլէի ասինստօմ մաթեկանիցի մէջը: Այս կուսակցութիւնը անգլեպարսկական դաշնագրի ստորագրելուց յետոյ լուծւեց՝ համարելով իր նպատակը արդէն իրականացած: Այնուհետեւ Սէյիդ Մօսլէմը կարգեց մի ուրիշ կուսակցութիւն, այսպէս կոչւած, Երրորդ դասի կուսակցութիւնը, որի մէջ մտան մեծ մասամբ Անգլիոյ հետ ունենալիք առևտրական նոր յարաբերութիւններից որոշ անկախութիւններ ունեցող առևտրական և արդիւնաբերական տարրերը:

Սէյիդ Մօսլէմի կուսակցութեան դէմ կազմուեց շուտով հակաառաջող կղերական Միլլիլիի իսլամիէ Իրան (Պարսկաստանի իսլամ ազգայնականների) կուսակցութիւնը, որ աւելի յենուած էր հասարակութեան վարի խաւերի վրա: Կուսակցութեան ծրագրում, որ հաստատարուեց 1919ին, պաշտպանում էր Պարսկաստանի կատարեալ անկախութեան և ամբողջութեան գաղափարը: Երկրորդ պահանջն էր իսլամական դիտութեան ուժեղացումը, այսպէս որ աւելի հետաքրքիր է, ինչպէս նախորդին կենտրոնացումը Մաշլիսի մէջ, վերաքննութիւն սահմանադրական օրէնքների, կապիտալիստիկների ջնջում, կանանց իրաւունքի պաշտպանութիւն իսլամական կրօնի հիմունքների համաձայն, նախնական կրթութեան շրջանում առանձին ուշադրութիւն դէպի իսլամական կրօնական դիտելիքների: Կուսակցութեան ծրագրի մէջ էր մտնում և կրօնի բաժանումը քաղաքական գործերից, շիա բարձրագոյն մարմնի հաստատումը՝ ընտրւած Մաշլիսի միջոցով: Աշխարհիկ պահանջների մէջ էին մտնում նաև կեանքային հարկը, հանաքային հարստութիւնների շահագործումը, երկաթուղիների, նաւահանգիստների, օդային, ծովային ստորինի կառուցումը, հանքային հաստատութիւնների, անտառների, գետերի, հազարապարսկական միջոցների ազգայնացումը, գրեզամտեսական դրամատան հաստատումը և ոտոմայն միջոցների կատարելագործումը: Պահանջում էր իսլամական կրօնի թելադրած օրէնքների վերականգնումը գրեզացում և կալւածատէրերի փոխարարութիւնների մէջ, պետական հողերի բաժանումը համաձայն իսլամական օրէնքի, տեղական արդիւնաբերութեան քաղաքներում, ութնամեայ աշխատանքի օր են:

Կղերական հետագայ կազմակերպութիւններից անհրաժեշտ է յիշել «Իսլամի Միլլիլի»-ը, որի հիմնադրին է կրօնական յայտնի զարդիչ Սէյիդ Ասադուլ-

լամ: Այս կուսակցութեան ղեկավար սկզբունքն էր ընձանալ Պարսկաստանը օտարական ազգերի շահագործութեան տալու աճէն մի փորձի դէմ: Միաժամանակ պահանջում էր հրաժարել աճէն տեսակի քաղաքական սկզբունքներից և բոլոր հարցերի լուծումը կատարել իսլամական կրօնի հիմունքներով, որ ընկերային և քաղաքական բարենորոգումների համար ամենաշայն հնարաւորութիւններն է ընդունում:

Եւ, վերջապէս, կղերական կուսակցութիւններից պէտք է յիշատակել «Ջամախտի Դիյանատը Իսլամի» կուսակցութիւնը, որի գլուխն էր կանգնած Թեհրանի յայտնի հողերական ընտանիքից Միրզա Նաշիմ Ալ-Մոհամմադ, ինչպէս և 1932թ. հիմնւած «Ահարը Իսլամ» կուսակցութիւնը: Սրա ծրագրային հիմնական կէտերն էին նախ՝ սերտ յարաբերութիւններ իսլամ բոլոր երկրների հետ՝ հակադրելով այդ օտարակրօն ազգերին և երկրի օտարակրօն տարրերին, քաղաքական երկրի սեփական արդիւնաբերութեան, հնարաւորութեան սահմաններում հրահայրում օտար արտագրութիւններից, պահպանում դասային տարբերութիւնների են: Այս կուսակցութիւնը աշխատում էր մի շարք ռամկապար սկզբունքների պահանջով ազատովի ժողովրդական յայն խաւերի մուտքը իր շարքերը:

Գասաուի կղերական հոսանքներից կարելի է յիշել Գիլանի «Էլլիմի» կուսակցութիւնը, որի դէմ կազմուեց աւելի ազատամիտ կղերականներից «Ազգային Միլլիլի»-ը, այսպէս Քիբոմանչահի Ալի Եասսիմ կուսակցութիւնը, որի պայքարի առանցքն էր կազմում հին կարգերի, հազուատ կապուտի, կանանց, ընտանիքային նախնի յարաբերութիւնների պահպանումը և այլն: Այս վերջինի դէմ աւելի ազատամիտ մէյիաները Քիբոմանչահի Ալի Մահմաուդի զինաւորութեանը կազմուեցին «Ալի Թալիս» միութիւնը:

Կղերական հոսանքների շարքը կարելի էր դեռ աւելի երկարել, մասնաւոր գաւառների մէջ, սակայն, այսքանն էլ բաւական է համոզուելու համար, որ իրօք անժխտիկ են հողերական-կղերական տարրերի որոշ մասի մէջ երևան եկած բարենորոշական տրամադրութիւնները, յատկապէս, ընկերային գետնի վրա: Վերջին պարագան մանաւանդ աչքի է զարնում կղերական յայն խաւերի մէջ, որոնք գուրկ են հողային հարստութիւններից և իրենց ապրուստը հոգում են միայն իրենց կոչումով: Տնտեսական նոյն պայմանների մէջ ապրելով ինչպէս քաղաքային պաշտպանութիւնը և զինաւորական որոշ խաւեր կամ հպատակ գրեզացութիւնը՝ կղերական այս տարրերը աւելի կողմնակից էին ընկերային քաղաքական հիմնական բարեփոխութիւնների քան հողատէր հողերականութիւնը, որ իր ընկերային միժնակով և հաշիւներով կապուած էր աւատական և կալւածատիրական դասերի հետ:

Հողերականութեան ալք փոքր ինչ ազատամիտ տարրերը դէմ չեն նոյն իսկ եւրոպական քաղաքակրթական գրաւումներից օգուտելու ցանկութիւններին՝ սակայն, լոկ այն չափով, որ չափով այդ կարող էր նպաստել երկրի ներթափանց և մշակութային մակարդակի բարձրացնելուն և նոյն գնքերով դրամատիրական շահագործող աշխարհի դէմ մաքաւելու գործին՝ առանց իսթաբիլութեան իսլամական կրօնի հիմնքը և շիա ազգայնականութիւնը:

Այս ընդհանուր գծերով կղերականութեան և նրա շուրջը հասաւած իմպրկցութիւնների ամփոփ նկարագրութիւնը տալուց յետոյ անհրաժեշտ է աւելացնել, որ, ճիշտ է, պարսիկ ազգային շարժումը մաքաւել է կրօնական տարրերից, սակայն, շիա հողերականութեան դերը վերջացած է և նա հետագային դեռ ի միժնակի պիտի լինի կարևոր գեր իսլամալու Պարսկաստանի քաղաքական ապագայում: Շիա կրօնը այժմ էլ չի կորցրել իր պատմական նշանակութիւնը պարսիկ ազգայնականութիւնը կազմալարելու մէջ, երբ, մասնաւոր, կրօնական դասի մի շարք ներկայացուցիչներ,

ինչպէս, օրինակ, մեծ համբաւ ունեցող Քարելի Եւլի Սիրաբանին, կարևոր դեր են խաղացել պարսիկ ազգային շարժման զինկամարտութեան գործում:

Պարսկական բանտարկան շարժումը դեռ իր սաղ-մային շրջանն է ապրում շնորհիւ ճարտարաւեստական խոշոր ձեռնարկութիւններ թացակալութեան, որի հե-տանեցով և գոյութիւն չունի այս երկրում ընկերային համապատասխան շերտաւորում: Աշխատաւորական և արհեստակցական միութիւններ չկ'ըլլա կազմում են միջնադարեան բնաւորութիւն կրող պարսկական համ-բարական կազմակերպութիւնները, որոնցից, օրինակ, 1925 թիւն, միայն Սպահանում, Քարբիլում և Քիր-մանշահում կար 120 ընկերութիւն: Համբարական այս միութիւններ ծրարել չկ'ըլլա կազմում էին հետեւել մի քանի պահանջները.

- ա. Պարսկական սահմանադրութեան պահպանում.
- բ. Պետութեան հովանաւորութիւն համբարական կազմակերպութիւններ չլրա.
- գ. Արհեստաւորական դասի շահերի պաշտպանու-թիւն.
- դ. Արհեստադրժական արդիւնաբերութեան պաշտպանութիւն, արհեստների աշխատանքում.
- ե. Օտար արդիւնաբերութիւնների սահմանափա-կում:

Ներկայումս, որքան էլ Համբարային տնտեսութիւ-նը տեղական գործարանային արդիւնաբերութեան ծա-ւալման հետ՝ անցման շրջան է ապրում, սակայն, նրա չի՛քներ իր ամուր ևն Պարսկաստանում: Համբարական կազմակերպութեան մէջ են մտնում այս երկրի արհեստադրժական արդիւնաբերութեան մէջ աշխատող տասնեակ հազարաւոր բանտարներն ու արհեստաւորները:

Բանտարական ձեռքերի աստու նիւթ ամենից շատ տւել է պարսկական գիւղը: Առաջ տասնեակ հազարա-ւոր բանտար ձեռքեր աւատական իրաւակարգի տակ ադրասացող դիւզիերից խմբեցով Անդրկովկաս և Ռու-սաստան էին պարթում աշխատանք փութելու Համար: 1911 թիւ վիճակագրութեան Համաձայն տարեկան 160 հազար այսպէս կոչւած «սեզանային» մշակներ էին անցնում Անդրկովկաս և ռուսական սահմանները՝ աշ-խատանք փութելու. բացի այդ շուրջ 33,000 պարսիկ բանտարներ աշխատում էին Անդրկովկաս և Ռուսաս-տանի քաղաքներում տեւականորէն, ամբողջ տարին: Յայտնի էր իր ժամանակին պարսիկ մշակների ցածր աշխատավարձը:

Գիւղական ընչազուրկ տարրերից էր կազմւած և անվիտական նաւթային արդիւնաբերութեան մէջ աշ-խատող բանտարութիւնը, որ, սակայն, գիւղական աշ-խատանքները սկսելուց ձգում էր դարձր և վերադառ-նում գիւղ: Ներկայումս անազխիթներին յաջողել է տեւական բանտարութիւն ստեղծել իրենց սեփական ձեռ-նարկութիւններ մէջ: Միաժամանակ աւատականու-թեան վերածամբ և հողային մի շարք բարեփոք-ութիւնների հետ գիւղացիութիւնը կապում է հողին, որ մեղմացնում է իր հերթին աշխատող ձեռքերի հո-սանքը դէպի հարեան երկրներ: Ընկերային այս ան-կազմակերպ վիճակը քաղաքական գիւղերին ծանր իրա-գարտութիւններ շրջանում ամէն կերպ աշխատեց օգ-տագործել Պորհրապէի Ռուսաստանը: Բազուրի կամ օտուական միւս մասերի թաթարների ղեկավարու-թեամբ (Ալիխանով, Ֆաւսուլաի, Ալաուի, Բանբաւով) թուրքերի Արմանիկի ղեկավարով՝ խորհրդային իշխանու-թիւնը ոչ մի չանք էր խնայում նրանց միջոցով իր օգտին քաղաքական հող պատրաստելու Պարսկաստա-նում: Այդ գաղտնի կազմակերպութիւնները մի ժամա-նակ նոյն իսկ ունեցան իրենց ժամուրը, որ գոյութիւն էր պահպանում թացառապէս ռուսական առատ ոսկու շնորհիւ:

Բազուրի գրաւումից յետոյ Պորհրապէի Ռուսաս-տանը յաջող կերպով օգտագործեց Բուշուկ խանի ըս-կան շարժումը: 1920 թիւ մայիս 18ին ռուսական զորքերը պարսկական ափ իջնա Ռասիդինիովի դիւա-ւորութեամբ և միանայով Բուշուկ խանին՝ Գիլանի շրջանը յայտարարեցին ճակակի հանրապետութիւնս: Սակայն, թուրքերեան տիրապետութիւնը Գիլանում եր-կար չտեսնէ: Յայտարարելով խորհրդային հանրապե-տութիւն՝ թուրքերը սկսեցին թալանի տալ Գիլանի շրջանը, ինչպէս յետոյ վարչեկան Հայաստանում: Նրանց բռնութիւններն ու կազմակերպւած թալանը պատճառ դարձաւ ընդհանուր ապստամբութեան, որի ժամանակ հազիւ ապստեցին ու փախան ռուսական զորքերի և նաւերի պաշտպանութեան տակ: Կառավա-րական զորքերը իրիւր խանի գլխաւորութեամբ վերա-հաստատեցին կարգը Գիլանի շրջանում՝ չեղոցացեցով ընդմիջու Բուշուկ խանի հակապետական շարժումը:

Բուշուկեան սաղբանները չզարգացեցին, ի հարկէ, և այնուհետև, ըսյց ազգային գիտակցութեան ներկայ հասունացած շրջանում բուշուկի գաղափարները հող չեն կարող գտնել Պարսկաստանում. այս երկիրը նման շարժման համար բացարձակապէս ցուրկ է ընկերային համապատասխան տեսչներից: Իրան պէտք է աւելա-ցնել և այն, որ պարսիկ Ժողովուրդը իրեն անմիջական հարեան խորհրդային երկրներին՝ աւելի մօտից նաե-րաւորութիւն ունի գիտելու և տեսնելու Ռուսաստանին ենթակայ փոքր Ժողովուրդները՝ ծանր վիճակը խոր-հրդային ընկալարդէ տակ:

Իր անկազմակերպ վիճակով բանտարական խաւերին մօտ է կանգնած պարսիկ գիւղացիութիւնը: Աւատա-կանութեան վերացման, պետական հողերի մտացելի գնբրով գիւղացիութեան վաճառելու հետ ու նաև հար-կային մի շարք բարեփոքումները շնորհիւ գիւղացին աշխատաւորութեան դրութիւնը աստիճանաբար բարե-լաւում է, չնայած դեռ երկրի մշակելի հողերի խոշոր թածինը մնում է մեծ հողատիրութեան ձեռքին: Վեր-ջին՝ յեղափոխութեան կատարած խոշոր փոփոխութիւն-ներէ հետ ներկայ կառավարութիւնը մեծ չանք է գործ գնում բարձրացնելու գիւղացիութեան նիւթական և հողեր մարմարակը, որ անշուշտ աւելի է ապահովում գիւղական աշխատաւորութեան իր երկրի քաղաքական կեանքի մէջ բերելիք ապագայ գործոն մասնակցութեան բոլոր կարելութիւնները:

Վերջացնելով այս համոտու ակնարկը պարսկական քաղաքական հոսանքների մասին՝ առաջին հերթին, նկատում ենք նրանց բաւական անկազմակերպ վիճա-կը: Միաժամանակ ստնում ենք, թէ, բացի դեմոկրատ կուսակցութիւնը, ինչպէս կարճ կեսը ունին պարթ-կական քաղաքական բեմի վրա ստադի նման երեսցող քաղմերանց կազմակերպութիւնները: Ի՞նձեմբրատներից յետոյ ներկայումս բարտուն և անպայմանորէն դրական գործունէութիւն է ցուցադրում Վրանը Զաւանըր շնա-յած որ նա անփութում է առ այժմ միայն մտաւորական տարրերի մէջ և դեռ համաժողովրդական կազմակեր-պութիւն լինելու բնաւորութիւնը չունի:

Մի բան, սակայն, անժխտելի է. պարսիկ քաղա-քական հոսանքները ծագման սկզբը մինչև վերջ պահ-պանել են իրենց հիմնական նկարագիրը: Երկրորդ Մալխուի մէջ բաժանուելով երկու հակառակորդ բանակ-ներին՝ գեմեկրատներին և պախպանզականներին՝ նրանք գծեցին իրենց մնայուն ուղին. մէկը իր գործոն պաշ-քարով աւատականութեան դէմ՝ ձգտում էր Պարսկաս-տանի վերածնունդին, միւրը՝ յուսանաօրէն կառւած աւատականութեան՝ աշխատում էր պահպանել ինչ ինչ կարգերն ու Վարդաների ստւներ: Այս հիմնական ուղ-ղութիւններին չուրջ պատուեցին և միւս մեծ ու փոքր կուսակցութիւնները, որոնցից շատերի ծագումը յա-ճախ պայմանաւորուել է քաղաքական օրւայ պահանջ-

ների անհրաժեշտութեամբ (քաղաքական հակում, խորհրդարանային ընտրութիւններ ևն), կամ ընթացիկ հարցերով (իրենց կողմնակիցներին նախարարական աթոռներէ և բարձր պաշտօններէ մէջ տեղաւորել ևն)։ Այդ պատճառով նրանց կենսքը, սովորաբար, խիստ կարճատե է։ ասպարէզից հեռացել են հէնց որ դրւած նպատակը համարել է յաջողած, կամ ձախողած, քիչ յետոյ, մի ուրիշ նպատակի համար այլ անունով երեւան դադու պայմանով։

Դրանով է բացատրուում այն փաստը, որ միւլենոյն անհատներին յաճախ հանդիպում ենք տարբեր կազմակերպութիւններէ մէջ։

Գաղափարները այս երեւումն է ոչ կաղապարած վիճակը, ի հարկէ, միայն ժամանակաւոր բնութարարութիւն ունի։ Բնականօրէն տնտեսական պայմաններէ

կառարեւոյրքմամբ, ընկերային յարաբերութիւններէ խորացման հետ դասային խմբաւորումները աւելի պիտի կերպարանաւորուեն, և կուսակցութիւնները, որոնք պէտք է ներկայացնեն այս կամ այն խաւի շահերը, աւելի պէտք է յտասկանան, ինչպէս և յարատեան իրենց ընդդէմ դրաքի ու քաղաքական ձգտումներէ մէջ։

Կասկած չկայ, որ սարսկական հասունացած ու որակով առողջ ազգայնականութիւնը ի վիճակի պիտի լինի այս ընկերային և դասային խմբաւորումները համախմբելու մի կենտրոնական գաղափարի շուրջ և նրանց ուժերը մղելու հայրենիքէ բարբորութեան և ազգային ընդհանուր նպատակներէ իրականացման գործին։

Գ. ՀԱՌՆԱՉԱՐԵԱՆ

Թ ՈՒ Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ձ

Անցեալ տարի հոկտեմբեր 27ին Պոլիս հասաւ Խորհրդային Միութեան արտաքին գործովար Լիովիւով, որ յաջողօրն իսկ էնկիւրի երթելով արտակարգ պատիւներու արժանացաւ։ Այս այցելութեան հետեւանցով ստորագրեցաւ 1931 հոկտեմբեր 30ի պրոտոկոլը, որով հինգ տարան նոր պայմանագրմամբ մը համար կերկրաբանութիւնը 1925 դեկտեմբեր 17ի «Չեղորջութեան Դաշնագիրը», կը բաժնուի Փարիզի մէջ Չեչերիին և Քուրբեյոյ արտաքին գործովար Քէվֆիք Բիւշտի պէջի միջև։

Ըստ երևոյթիին, Լիովիւովի այս այցելութիւնն փոխադարձելու նպատակով է որ Ըսմէթ փաշա և Քէվֆիք Բիւշտի պէջ հատրտօրն և բազմապէս շքախումբի մը ընկերակցութեամբ Ալայի 23ին առասական Գրաւօրիա (Վրաստան) շոգեճատով մեկնեցան Օտեսա, անկէ Մոսկուա և Լենինգրաւ անցնելու համար։

Դիւանապետութեան մէջ ընդունւած սովորութիւն է անշուշտ փոխադարձել թաղանորթ մը կամ պետական բարձրատիրան անձնաւորութեան մը ղէպի օտար, բարեկամ երկիր կատարած այցելութիւնը։ Թրքական պատկանելի պատերազմութեան մը ղէպի խորհրդային երկիր ճամբորդութիւնը ո՛չ մէկ կերպով կրնայ արդարանալ իբրև քաղաքովարական այցելութիւն։ Լիովիւովի այցելութիւնը փոխադարձ էր արդէն էնկիւրիի արտաքին քաղաքականութեան վարիչը, որ անցեալները Պարսկաստանի հետ բարեկամական դաշինք կնքելէ վերջ, Քեհրամէն Մոսկուա անցած էր և այցելու իր բոլշևիկ պաշտօնակիցին։

Ուրեմն, այս ճամբորդութիւնը քաղաքական կարեւոր Նպատակ մը ունէր։ Գաւտիբալութեան կրնկերանային ճեմալական մեծ թերթերու խմբաբախտները, որոնք միաժամանակ երեսփոխան են էնկիւրիի Ազգ-Մեծ ժողովին մէջ և կը վարեն թուրք հանրային կարծիքը։ Ասոնք բոլորն ալ ջերմ համակիրներ են խորհրդային իշխանութեան և կը ջատագովեն բոլշևիկեան անտեսական կարգ մը մեթոտներուն գործարդութիւնը թուրքերոյ մէջ։ Գաւտիբալութիւնը յիշնց երեսփոխան Մամուտ պէյը (Միլիտէթի խմբաբախտ և Խորհրդարանի արտաքին յանձնախումբի նախագահ), համարաւոր Ենուս Նատի, Բեմալի դահճապետը Ալին (Աֆիոնի երեսփոխան), Բուչէն Էլբիքը, Շագուպ Գաորին, Ճալիհ Բիքիւն, Քասալի, Արաւտիս ձէ-միլը։ Բոլորն ալ երեսփոխան։ Ուայը կուսակցութեան ընդհանուր քարտուղար Բէճէպ պէյի մասնակցութիւնը նոյնպէս կը շեշտէր այս այցելութեան կարեւորու-

թիւնը։ Բացի քաղաքական ղէմքերէ, պատուիրակութեան մաս կը կազմէին եմտական և տնտեսական գործերու պիտաւոր վարիչները, ինչպէ՛ս՝ Աչապի շաքըզ գործարանին տնօրէնը Բէմիք, ճարտարաբանատի ընդհանուր տնօրէն Եէրիֆ, կերպասեղէնի գործարանին տնօրէն Եէվթէթ Թուրկուս, տնտեսական գործավարութեան խորհրդական Քեամիլ Բուրաչիւմ և այլն։

Գաւտիբալութեան կազմն իսկ ցոյց կուտայ թէ էնկիւրի ո՛րքան մեծ կարեւորութիւն կընծայէր այս այցելութեան։ Շատ հասանաբար ատոր հետեւանցով խիստ ծանրակշիւ որոշումներ պիտի տրւին և թուրքերոյ էլիտական-տնտեսական կենտրոն մէջ խորունկ յեղաշրջում ստալ պիտի գայ։

Օտեսայէն մինչև Մոսկուա, Լենինգրադէն մինչև Մեկաստպոլ թուրք և բոլշևիկ պաշտօնական ղէմքերը սիրակոզ ճառեր արտասանեցին, համարեցան և յաւիտենական բարեկամութեան ու հաւատարմութեան երդումներ ըրին։ Բոլշևիկները գովեցին թուրքերու քաղաքործութիւններն ու յեղափոխական արաքները՝ Տուճուփուտարի յաղթանակէն մինչև Ֆէսին ու չարչարի բարձումը, մաղթելով որ տնտեսական ճակատին վրա ևս նոր Տուլուփուտար մը շահին (ընդունելով բոլշևիկեան մեթոտները, ինչպէս կուզէին հասկըցնել լոբիշային)։ Ինչպէս որ ճանկախութեան պատերազմին տունն օտար աշխարհակալ դրամատիրութեան ղէմ կուի կը մղէին, միանգամ ընդմիշտ ձերբազատելու համար անոնց լուծէն, ներկայիս ալ թուրքերը կը կուին նոյն դրամատիրական երկիրներուն ղէմ, տնտեսական անկախութիւնը ձեռք բերելու նպատակով։ Բոլշևիկեան թերթերը ևս յիշեն այս առողութեամբ էնկիւրիի վարիչներէն կատարած աշխատանքները և օտալին աստիճանի վրա նոր երկաթուղիներու շինութիւնը, ինչպէս նաև ճարտարաբանտի գարի տրելը։

Որոչ չէ ասկալին թէ ինչքի բուսեցան Մոսկուայի կանանց սեղանին շուրջ և ի՛նչ զաղյունի թուրքեր ստորագրեցան։ Միակ փաստաթուղթը զոր ունինք, բոլշևիկեան պաշտօնական Թաւ գործակալութեան մէկ գեկոյցն է, հրատարակւած Մայիս 8ին, թուրք պատերազմութեան մեկնած օրը։ Իր կարեւորութեան պատճառով, նոյնութեամբ կուտանք այդ գեկոյցը, թարգմանելով Պոլսոյ Միլիտէթէն (9 մայիս)։

« Խորհրդային Միութեան մէջ իրենց բնակութեան ընթացքին, թուրքերոյ վարչապետ Ըսմէթ փաշա և արտաքին գործովար Քէվֆիք Բիւշտի պէյ խորհրդային կառավարութեան ամենէն պատասխանատու ղէմքե-

րուն Հեռ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցան: Սօսակցութեանց ներկայ էին երկու պետութեանց ալ իրարու երկրին մէջ ունեցած մեծ դեսպանները:

« Այս տեսակցութիւնները մասնաւորաբար անկեղծ և բարեկամական նկարածանք մը առին: Անոնք ո՛չ միայն դարձան ուղղակի երկու երկիրներու յարաբերութեանց շուրջ, այլ նաև թոյլ տուին լայն ջնուութեան ենթակցելու երկու երկիրներն ալ շահարդող միջազգային բազմաթիւ Հարցեր: Տեսակէտներու կատարեալ համամասնութիւնը թոյլ տաւ Հաստատելու թէ ցարդ կիրառեալ սերտ գործակցութեան ջարդարականութիւնը բոլորովին կարդարանայ, միւս կողմէ միջազգային ներկայ կացութիւնը և ընդհանուր խաղաղութեան շահը կը թելադրեն ոչ միայն պահպանել, այլ և ընդլայնել այս գործակցութիւնը:

« Մասնաւոր ուշադրութիւն ընծայեցաւ թուրքերոյ և Խորհրդային Միութեան տնտեսական և մտաւորական յարաբերութիւններուն: Մեր թուրք հիւրերը աւելի մօտէն ծանօթացաւ Խորհրդային Ռուսերոյ տընտեսական, Հանրօգուտ շինութեանց և դիտական մարդկերուն մէջ կատարած վերակենդանացումի աշխատութեանց: Ասկիւս առիթ մը եղաւ ցոյց տալու թէ՛ երկու երկիրներն ալ նմանօրինակ խնդիրներու առջև կը գտնուին և թէ այդ Հոգիք վրա, գործնապէս կարելի է աւելի սերտ և արգիւնաւէտ չիտմ մը ունենալ:

« Այս գործնական շփումի եղանակներուն մասին սկզբնապէս Համամասնութիւն մը գոյացած է, և այս նպատակով Խորհրդային Միութենէն արդիական կազմածներ զնելու պայմանով խորհրդային կառավարութեան կողմէ ութ միլիոն տոլար վարկ մը բացաւ ի երկար պայմանաժամով: Այս փոխառութիւնը պիտի Հատուցի ապրանքով, տարեկան մասնավճարներով:

« Նոյնքան օգտակար նկատւած է նաև զարկ տալ երկու երկիրներու մշակութային յարաբերութեանց, մասնաւորաբար աւելի կենդանի և ուղղակի փոխանակութիւններ կատարել գիտական հիմնարկութեանց միջև: »

Այս զեկողյցն կը՝ տեսնիք թէ՛ ընդհանուր խօսքերէն դուրս, որոնք սրբանորոգական են նման ջարդարական տեսակցութեանց առիթ: Միակ զբազան արգիւնքը զոր թուրքերը յամրողած են ձեռք բերել, ութ միլիոն տոլարի (16 միլիոն թրքական ոսկի կամ 200 միլիոն ֆրանք) փոխառութիւնն է: Տնտեսական ներկայ ծանր տաղանակն մէջ, թուրքերը պիտի նախընտրին անշուշտ այդ փոխառութիւնը կատարել դրամով, զանազան թացեր գոցելու համար. սակայն, Մոսկուա իր բոլոր ազդերները տրամաբար ըլլալով ճշգրտանայ ծրագրի իրագործման, ի վիճակի չէր դրամական ուէ գործողութիւն ընելու: Այս կարգադրութեամբ, բոլշևիկները իրենց անակախակն առևտրական լաւ գործ մը կատարած կրնան, իրենց ճարտարաւեստի արտադրութեանց համար շուկայ մը ձեռք բերելով: Ութ միլիոն տոլար արժեքով շաքարի և բամպակի Հիւսանդղէի գործընթացի պիտի ծախեն թուրքերուն, որոնք ծրագրած են իսկիւնէ՛հրի կամ Սերաստիոյ մէջ շաքարի, Կիլիկիոյ մէջ ալ Հիւսանդղէի գործարաններ բանալ:

Քէմալի օրով, շաքարի երկու գործարաններ բացեցան թուրքերոյ մէջ, Ալիուլուս և Ուշալ: Անոնք ընդհանուր պատումին 100ին 30ը միայն կը Հայթայթի թնն. նոր բացելիք գործարանները այդ Համեմատութիւնը պիտի բարձրացնեն 50%ի:

Գալով Հիւսանդղէին, թուրքերոյ ներածումներուն մէջ կարեւոր տողաւ մը կը ներկայացնէ ան: Վիճակագրութեան մը Համաձայն, տարեկան 50 միլիոն թրքական ոսկիի Հիւսանդղէն կը զնի Եւրոպայէն, Ամերիկայէն ու Ճափոնէն: Հիմա կողմէն այդ ճարտարաբանութիւն ալ զարկ տալ տեղական ապրանքի գործածութիւնը ընդհանրացնելու և երկիրը ծանր զոհողութիւններէ ազատելու համար:

Լքած Եւրոպայէն և Ամերիկայէն, փոխառութեան ամէն յոյս կորնուցուած, ինկուրիք վարիչները իրենց յոյսը դրած էին Մոսկուայի վրա՝ երկրին ջարդարած տնտեսութիւնը վերակազմելու համար: Ձեռք բերած արդիւնքը չափ ճշմո՛ւ է և Հակառակ մամուլի կաշկանդումին, դժգոհութեան զուտ արտայայտութիւններ անպակաս են թուրք թերթերուն մէջ:

Ըմէթ փաշայ վերադարձին վերջ, պատուիրակութեան մէջ մասը մնաց Ռուսիա, ուսումնասիրելու Համար բոլշևիկական տնտեսական մեթոտները, որպէսզի ի Հարկին գանձը կիրառեն թուրքերոյ մէջ:

Արդէն վերջին տարիներս բոլշևիկական ազդեցութեան Հետքերը որոշ կերպով կը տեսնին թուրք տընտեսութեան գանձուք ճիւղերուն վրա: Սպառուիքի անհրաժեշտ նիւթներն շատեր պետական մենաշնորհ դարձած են: Հիմա մը մամանակէ մը ի վեր գործակցական (կոոպերատիւ) շարժումն ոյժ կը տուի: Մեծ Հասանք մը կայ գէպի պետականացում և ազգայնացում առաջ նորոգելու արդիւնաբերութեան բոլոր միջոցներ՝ երկաթուղիներէն մինչև Հիւսանդղէի և ուստետղէի գործարանները:

Միւս կողմէ Բողոլուրըը ծանր տուրքերու բեռան տակ կը Հեծէ: Այլքան բազմատեսակ տուրքերը նախաբայլ մը կարելի է Համարել դէպի աստիճանական օեփականացումներ: Մեղմ տեսակէն բոլշևիկացում: Չանազան անուշներով օտեղծւած տուրքերուն Հետեւանքով, Յունիսէն վերջ մասնակաւոր պաշտօններուն բոլշևիկ Հետեւանք Համեմատութիւնը պիտի ստանայ— 250 օսկի ամսական ունեցողին ձեռքը պիտի անցնի միայն 170, օսկի, 100 օսկի ստացողը 70 միայն պիտի կրնայ առնել, 70 օսկի անողը՝ 50, և այսպէս աստիճանաբար:

Երբ այս է կացութիւնը, Մոսկուայի տալիք գործընթացով և մեքաններով չէ որ պիտի փրկի թուրքեան: Աչքերու փոշի ցանելու համար, Կրեմլինի ծիրանաւորները թուրքերոյ ներած են 10 տրակտոր, 3 Հրասայլ, 2 բեռնատար ինքնաշարժ, 10 Հանրատար, իսկ Մուսթաֆա Քէմալին և Ըմէթին ալ՝ մէկմէկ արնատոսճ մի:

Մոսկուայի այցելութեան տնտեսական արդիւնքն այս է: Գալով ջարդարականին, այս մասին ձայնածուլուտուն չկայ: Թէ՛վիք Ռուսիոյ այլ Մոսկուայէն մեկնելու օրը կայտարարել թէ՛ ո՛չ մէկ զազոտն դաշնագիր ունին Խորհրդային Միութեան կամ ուրիշ երկիրներու հետ: Անկեցող թէ՛ ո՛չ մէկ սակարկութիւն ըրած են Այգերու Դաշնակցութեան մէջ տեսնելու և մնայուն աթոռ ունենալու մասին, Հերքեց նաև թէ իմբակցութիւն մը կազմւած է՝ թուրքերոյ, Յունաստանի և Գուրկարիոյ մասնակցութեամբ:

Այս այցելութեան ջարդարական արդիւնքները Հեւտղէտէ կրեան պիտի ելլեն անշուշտ:

Կասկածէ դուրս է թէ Մոսկուա ներկայիս աւելի քան երբեք պէտք ունի դաշնակիցներու, եր ծայրագոյն արեւելեան և Հարաւային սահմանները պաշտպանելու համար ամէն Հաւանականութեան դէմ: Այդ ապահովութիւնը ձեռք բերելէ վերջ, կրնայ գործելու ազատութիւն ունենալ Մանրերիոյ ճակատին վրա, ուր այս օրերս մութ ամպեր կուտակւած են, սպառնալով աննախընթաց փոթորիկ առաջ բերել:

Մոսկուայի տեսակցութեան ջարդարական Հետեւանքներէն մէկն եղաւ այն, որ Մոսկուա պարպեց թրքական սահմանադրուիքի յորսխումները և Մանրերիա փոխազդեց գանձը: Այս ոլորը որ Հաստատուեցաւ Թաւի պէս ծանրազուրկ թերթի մը կողմէ եւս, պէտք է երկար մտածել տայ մզի: Ուրեմն Հայաստանի սահմաններուն պատշապակութիւնը կը լանձնի զէմայական պահակազորքին... Մայրաքաղաք Արեւելքի մէջ ծագելիք ՀրդէՀ մը կրնայ իսկական ազէտի մը վերածուիլ մեր երկրին համար:

Թուրքերուլիւնիկ սիրաբանութենէն տուժող դար-

ձեւայ շայ ժողովուրդն է: Մօտիկ արաւան յիւ է անակնշարտիւրով...

Մտակայէն վերազանայէ վերջ, առանց Հանգիստ ասնելու, Համէթ փայազ եւ Թէլփիթ Բիւշուի պէջ Հոռո՞ գացին՝ Իտալիոյ դիկտատորին հետ տեսնելու համար: Այս այցելութեան առթիւ զբոսաշրջարարական փոխադարձութեան խնդիր չարտօնուեցաւ: Իտալացիները չառ ընդունելութեան ըրին իրենց թուրք Հիւրերուն, առանց սակայն Հաստատելու թուրքիկներու փառաշուք ցոյցերուն եւ Հարիւր Հազարոնց սպաւորէջ զօրանցքին:

Թուրք պատերազմները ընդունեցան Իտալիոյ թափափարին կողմէ, որ ճաշի Հրաւիրեց գանձեք: Մերայիք տեսակցութիւններ ունցան Մուսոլինիի եւ արտաքին նախարար Կրանտիի հետ (այս վերջինը առջի տարի էնիլիւրի այցելելով յաջողցուցած էր թուրքեհեղինէն Համաձայնութիւնը): Իտալիներն թերթերը շերտ տողեր ներքեպին Թուրքիին եւ անոր վարիչներուն:

Իոյոք այս խանդավառ ցոյցերն ու պաշտօնական ընդունելութիւնները յանդիպան երկու դրական արդիւնքի: Առաջին՝ պրոտոկոլի մը ստորագրութիւնը, երկրորդ՝ փոխառութեան մը կնքումը:

Մայիս 24ին մէկ կողմ Մուսոլինիի եւ Կրանտիի, միւր կողմէ Համէթ փայազի եւ Թէլփիթ Բիւշուի պէյի միջև կնքուեցաւ Հետեւեալ պրոտոկոլը, որով Հինգ տարեան համար կերկարարձկը 1928ին երկու պետութեանց միջև կնքուած բարեկամական, իրաւարարական, շեղբուրթեան եւ ընկալութեան դաշնագիրը: Ահա այդ վաւերագրութիւնը.

Յօդած 1.— Պայմանագիր երկու բարձր կողմերը յանձն կտանեն շտմունք շաղաքական կամ անտեսական ուէջ Համաձայնութեան կամ կամրիմէզգանի մէջ որ ուղղութեամբ ըլլայ կողմերէն մէկուն դէմ:

Յօդած 2.— Այն պարագային, երբ պայմանագիր կողմերէն մէկը, հակառակ իր խաղաղարարական ընթացքին, յարձակում կը մէկ կամ մէկ անի աւել ուրիշ պետութիւններէ, միւս կողմը, վէճին ամբողջ տեսչութեան ընթացքին չեղողութիւն պիտի պահէ:

Յօդած 3.— Պայմանագիր երկու կողմերը յանձն կտանեն դիմելու իրաւարարական դրութեան մը, ամէն անգամ որ կարելի ըլլայ դիւանագիտական ընկալանոն միջոցներով Հարթի իրենց միջև ծագելիք վէճ մը: Եթէ իրաւարարութիւնը չյաջողի, պիտի դիմի իրաւական լուծման մը: Իրաւարարական եւ իրաւական լուծման այս մեթոտը նախատեսուած է յարակից պրոտոկոլով: Այս տրամադրութիւնները չեն գործադրուի սակայն, այն պարագայներուն որ կը մտնեն պայմանագիր երկու բարձր կողմերէն մէկուն իրաւասութեան մէջ, Համաձայն երկու կողմերուն միջև գոյութիւն սենցող դաշնագիրներու տրամադրութեանց: Անոնք չեն կրնար գործադրուի նաեւ այն պարագաներուն համար որ կը վերաբերին միջազգային իրաւանց արձադրութիւններով սահմանուած զեթիխանութեան իրաւունքին: Ուէ խոզի գերիշխանութեան իրաւունքին հետ ունեցած կապը կը հաստատուի կողմերէն մէկուն կողմէ ըլլալիք դրսուտ յայտարարութեամբ մը: Իրաւարարութեան ենթաբաժնիք ամէն վէճ նախ պէտք է պատշաճի ներկայ յօդուածին տրամադրութեանց, համաձայն յարակից պրոտոկոլին: Իրաւարարական որոշումը պէտք է համաձայն ըլլայ միջազգային իրաւունքի սկզբունքներուն:

Յօդած 4.— Ամէն վէճ որ կրնայ ծագել ներկայ Համաձայնագրի մեխանիզմներէն կամ գործադրութեան պիտի ենթարկուի ուղղակի Լահէյի միջազգային ատենան յ:

Այսպէս, ուրեմն Հինգ տարեան համար եւ Թուրքիա կապահովէ իր զարեկամութիւնը Իտալիոյ հետ: Այս բարեկամութիւնը սկսաւ Զինարարութիւն օրերէն: Այն առնել Իտալացիները գրաւած էին Ատալիոս-Գոնիոս ըրջանը, որուն աչք տնկած էին երկար ատենէ ի վեր

ե որ պիտի դառնար Իտալիոյ ք աղբեցութեան շրջանակ յը: Հոռո՞մ վարիչները զուէ չէին որ Իոյմիք շրջանը եւ ներքին Անատոլու գրաւած են Հէլլեններուն կողմէ, որոնք վերջնապէս ծրագրած էին այդ հողերը կցել Մար Յունաստանին, իրականացնելով դարեքի ի վեր երազած Մեծ Գազապարը (Մէգալոս Իուէս):

Զախողեցնելու համար այս ծրագիրը, Իտալացիները (աւելի Հպմարձակ քան Անգլիացիներն ու Գրաստացիներն) ձեռք տակէ օգնեցին Մուսոլինիին Գեմալի Միլլի շարժումին եւ շատ ուրախ եղան երբ Հէլլենները ծով թափեցան Իոյմիք մէջ: Իտալացիներուն համար շատ դժուար պիտի ըլլար սպագային դրաւել այդ շրջանը՝ եթէ անիկա մնար Յունաստանի ձեռքը: Մինչդէռ դիւրին էր Թուրքին ձեռքէն անելը, քանի որ պատմականօրէն եւ ճակատագրականօրէն Թուրքիա դատապարտուած է ընդմիջա անդամահատուելու: Այդ դիւրին անդամահատումի փորձն ըրած էին արդէն Իրենք 1911ին, երբ բարի օր մը յարձակելով պարիկեան Տրիպոլիսի եւ Պէնկագիի վրա, խեղցին գանձեք օսմանեան կայսրութեան ձեռքէն եւ զաղթագայրի վերածեցին: Այդ օրերուն Թուրք թերթ մը — Թերթիմա — ամէն օր խոչոր տատերով եւ վեց սիւնակի վրա կը գրէր Թերթին ճակատը՝ Իտալիան մեր յախտնեանկալ երջանմի՞ն է: Այդ թնամութիւնը շուտով մոռուեցաւ, երբ 1911ին յաջողեց 1912ը — Պալատեան սրտերազմը, որ օսմանեան կայսրութիւնը զրկեց իր աւելի կենսական անդամներէն — Ալպանիայէն մինչև Թրակիան:

Լոզանի դաշնագրէն վերջ, երբ Մուսոլի վէճը արժարձեցաւ Անգլիայի եւ Թուրքիոյ միջև, Մուսոլինի ուղեց արիթէն օտարը — Անգլիոյ զբոսական անշուշտ, դրաւելու համար Իոյմիք-Ատալիա շրջանը: Փաշիստ դիկտատորը սպանական յայտարարութիւններ ըրաւ Թուրքիոյ հասցէին, մինչև որ այս վերջինը սարտափէն կակուղցաւ եւ սեղի տուաւ անգլիական պահանջներուն:

Դեռ ժամանակը չէր հասած Թուրքիոյ նոր անդամահատման, այդ պատճառով ալ Իտալիա բուսականացաւ կարգ մը դիմումներով: Այսպէս, այդ օրերուն կնքուած Համաձայնագրով մը, Իտալիա իրաւունք ըտացաւ չինելու Թուրքիոյ կարգ մը երկաթուղիներն ու նաւահանգիստները, մասնատարար Իոյմիք-Ատալիա շրջանին մէջ: Այդ չինութեանց մէջ պիտի աշխատին Իտալացի ճարտարագետներ եւ բանուորներ: Այս վերջինները իրաւունք պիտի ունենան իրենց ընտանիքներով հաստատուելու թրքական հողին վրա: Տարեկան 20,000 հոգի պիտի կրնան այս ձեռով Թուրքիա մտնել եւ Հոն տեւական ընկալութիւն հաստատուի: Ասկէ գատ, Թուրքիա յանձն կտանէր իր մարտանակերը չինել տալ Իտալիոյ նաւարաններուն մէջ:

Թուրքիա ստիպուեցաւ զլուրի ծոկէ Մուսոլինիի պարտադրած պայմաններուն, աւելի մեծ չարեք մը փրկուելու համար:

Ասկէ վերջ Իտալիա-Թուրք յարաբերութիւնները զարգացան հեղահեղ եւ Իտալիա, այս քանի մը տարիներու ընթացքին, Արեւելեան Միջերկրականի առաջանին մէջ զեկամար դեր տեսնուած է, առաջնակարգ դիրք գտելով եւ կ'զործեր կը դառնարէ Համաձայն իր շահերուն:

Ալպանիան շատոնց իր աղբեցութեան ենթարկուած է: Յունաստանի հետ կնքած է մասնատոր Համաձայնութիւն մը եւ անոր բարեկամութիւնը շահելու համար խոտացած է երկրաստան կղզիներէն որոշ մաս մը գրելու: Իտալիոյ շնորհէ էր որ Թուրքիա եւ Յունաստան հաշտարարութիւն ենթադրեցին Անատոլուի շարժուեք պատերազմէն առկախ մնացած թուրք ինդիւրները: Պուլկարիան ալ յաշտուեցաւ սերտահեղ Իտալիա, եւ այդ բարեկամութիւն ենթադրուեցաւ Պուլկարիոյ Պոլիս թագաւորին եւ Իտալիոյ թագաւորին աղկանձ մովանալի ամուսնութեամբ:

Անգլիա, Ֆրանսա եւ Գերմանիա ուրիշ հոգեր ունին սաղին. հետևարար, լուեխան Համակերպած են անոնք

որ Իտալիա էր ուզած ձևով գործէ Արեւելեան Եւրոպայի մէջ: Փոքր Համաձայնութեան դէմ — Լեհաստան, Նուկուլայիա, Չեխոսլովակիա և Ռումանիա — որ կը գտնուի Ֆրանսայի Հովանաւորութեան տակ, Իտալիա ոտքի կանգնած է ուրիշ քաղաքական կոմիտեանքի մը Յունաստան, Թուրքիա, Ալպանիա, Պուլկարիա և Հունգարիա: Այս ընթացքով Իտալիա Հետզհետէ պիտի ամրացնէ իր դիրքը Մեքսիկոյ Արեւելքի մէջ և շատ վախ կայ որ աւելի պահանջկոտ դառնայ: Մեծ Պատերազմի ատենի բաւարար բաժին շտապաւ և Ժամանակ առ Ժամանակ զաղթափայլերու պահանջը հրապարակ կը դնէ: Սուրբոյ մասին էր սխորթակը սուր է միտ: Ֆրանսացի յայտնի քաղաքական դէմք մը, ինչպիսին է նախկին վարչապետ Փոլ Փէնլըվէն, այժմ օղային նախարար էրիոյի դահլիճին մէջ, վերջերս կը բնագործէր Իտալիոյ թողուլ Հոգատարութիւնը Սուրբոյ, որ ցարդ գոհոյութիւններ պարտադրած է Ֆրանսայի, ասանց զրական օգուտ մը պարզեւելու: Եթէ իրականանայ այս ծրագիրը, իտալական աշխարհակազմութիւնը կրնայ աւելի մեծ երացներու ետեւէ ըլլալ, վերականգնելու Համար երբեմնի փառապանծ հռոմէական կայսրութիւնը, Փաշիսաներու գերազոյն իտեալը:

Ըսինք թէ՛ Ըսէ՛ք փաշայի այցելութեան երկրորդ դրական արդիւնքը եղաւ փոխառութեան մը կնքումը: Ինկիւրիէն առնուած յունիս 1 թիակիր պաշտանական Հնուագիր մը կրտէ թէ՛ Թուրքիոյ վարչապետին Իտալիա այցելութեան առթիւ, իտալական կառավարութիւնը որոշած է չուրք երեք միլիոն անգլիական

ուկիի փոխառութեան մը ընկ թուրքիոյ: Այս գումարէն մէկ միլիոն ստերլինը Թուրքիոյ պիտի տրուի գրամի ձեւին տակ, իսկ երկու միլիոն ստերլինի արժէքով գանազան ապրանքներ պիտի տրուին: Այս ապրանքները զիծ պիտի ըլլան ամառապատրուէ:

Վարչապետական այցելութեան ամենէն կարևոր արդիւնքը ստիկա է: Հնուագիրը շրտեր թէ այսպիսի փոխառութեան մը Համար Թուրքիա ինչև ծանր զեջուաներ ըրած է Իտալիոյ:

Մէկ միլիոն ստերլինը (օրւան սակով 8 միլիոն թրքական ոսիկ կամ 95 միլիոն ֆրանք) շատ նշին դումար մըն է անշուշտ Էնկիւրիի կրմտացոյցին ահպին բացերը գոցելու Համար: Մնացել էր երկու միլիոն ստերլինը անմիջական օգուտ մը չպիտի ունենայ՝ տրնտեսական տաղանայր փարատելու Համար: Ամէն պարագայի մէջ, Իտալիա աւելի աւատամտուն գտնուցաւ քան Մուկան, որ ո՛չ մէկ հնչուն գրած տուա Ըսէ՛ք:

Դէպի Մոսկուա և Հոռմ կատարած այս կրկնակ այցելութեանց քաղաքական նկատանքները չպիտի ուշանան յայտնուէ:

Լուրի մը Համաձայն Թուրքիոյ նաւարանները կը տրին իտալացի մասնագէտներու Հակոդութեան և Հակալիւրին իսկ: Պատերազմէն առաջ Անգլիացիներ կը կատարէին նոյն պաշտօնը՝ Թէրասնէի և Հէյալէի նաւային վարժարանին մէջ: Իտալիա Հնուգնէ Անգլիոյ նախկին դիրքը զրաւել կուզէ Մերձատր Արեւելքի մէջ:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒՆԷԼ

Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ծ Ի Յ Ն Ե Ր Ս

(խորհրդ. Միութիւն և Հայաստան)

Եթէ մի կողմ թողնենք Ըսէ՛ք փաշայի այցելութեան Մոսկուա, որի մասին խօսուում է «Թուրքիոյ չուրքը» բաժնում, և պատերազմի վախերը Հեռուար Արեւելքում՝ որտեղ չարունակում են մնալ նոյն վիճակում ինչոր էին առաջ, խորհրդային Միութեան կանգնել ուշադրաւ դէպքեր անցնալ ամառը շնորհակալ կապ ունին ներքին քաղաքականութեան հետ:

Չնգամեայ ծրագրի իրագործման արտակարգ ճիւղերն ու զիւղացիութեան զանգուածային կոլիտագացումը ծայրայնորէն թուլացրին Խորհրդ. Միութեան ազգաբնակչութեան արտադրական կարողութիւնն ու կամքը: Գիւղացիութեան աւելի քան 60%ը նեղգրասած Հասարական տնտեսութիւնները չուին սպասուած արդիւնքը: Հացի ու սոււայի ծրագրած քանակը շտապեց, երկրագործական ապրանքների զներք տարապայմանօրէն բարձրացան: ալխատող ձեռքերի հոսանքը դէպի քաղաք կանգ առաւ, գործարանների հում նիւթը աւելի ևս պակասեց, և երկրի գրուութիւնն էլ աւելի վատացաւ: Խուսառտանի գանազան մասերում, քայք, մանանդ, Ուկրաինայում ծայր տեց սովը: արդուստի միջոցները ծայր սասիճանի սղեցին: Հացի փութը, օրինակ, (16 կիլոգրամը), որ 1929 թիւն արժէր հինգ ռուբլի, 1932ին՝ բարձրացաւ 170 ռուբլի, այսինքն՝ բանտորի մէկ ու կէս ամուսյ առճիկի: Քաղաքներում, շատ տեղեր, խանութներից բաց են թողնում մարդ գլուխ 200-300 գրամ հաց: Միայն, իւրը, Հակիթիթ, պահիրը դարձել են շուկայութեան աւարակայ՝ մտայնիլ միայն արտօնեանքներին: Երկրի գանազան ծայրերում անխուսափելիօրէն յաճախալէպ դարձան բանտարական ու գիւղացիական շարժումները: Կոճկուսի վերի խաւերն անհանգստացան:

Եւ ինչպէս նման դէպքերում սովորութիւն է բուշեիկների Համար, խորհրդային իշխանութիւնը նորից րունց պէջնումէ՛ ճանապարհը: Սուղին քայլը կոճկուսի Կենտկոմի 26 մարտ, արդէն ծանօթ, որոշումը Եղաւ «կովերի ազատագրութեան» մասին: Մայիս 6ին հրատարակեց երկրագործական Հարկերի օրէնքը, որով որոշ դիւրութիւններ են տրուած գիւղացիութեան: Մայիս 7ի օրէնքով կոլիտոնների պետութեան Հասանելիք ցորենի քանակը Հաստատուում է 1,103 միլիոն փութ փոխանակ 1933ի 1,367 միլիոն փթի: Պետութեան բաժինը Հասուցանելուց և սերմացուի մասը մի կողմ դնելուց յետոյ, կոլիտոնների կրաւուք են տանում Հացահատիկի մնացորդը վաճառելու մասնաւոր շուկայում: Մայիս 14ին պետութեան Հասանելիք մսի քանակը սահմանում է 760,000 տոն՝ ծրագրով որոշում է 1,414,000 տոնի փոխալէն: Իրաւունք է տրուած տաւար մորթել և շուկայում վաճառել: Մայիս 21ի օրէնքով կոլիտոնների և աշխատուոր անհատ տնտեսութիւնների վաճառած մթերքների ազատում են տուրքերից:

Խորհրդային թէրթերն արդէն արձանագրում են շուկայի գործառնութիւններ, թէն շարժումը զեռ շատ թոյլ է: գիւղացին ծախելիք բան չունի: Թէև օրէնքով պատ վաճառքը թոյլատրւած է միայն կոլիտոններին ու անհատ տնտեսութիւններին պայմանով, որ միայն սեփական արտադրած ապրանքը շուկայ հանեն, բայց արդէն կրկնապահաւան ու շարաշահութիւնը սկսած են: Եւ, ի հարկի, էրթալով աւելի պիտի զարգանան: Ոմանք արամպիր են կարծելու, թէ սա մի նոր տեսակի Ալէյ է՝ տնտեսական նոր քաղաքականութեան, անհաստիկան նախաձեռնութեան և ազատ տնտեսագործութեան մի նոր շղթա: Այդպէս տաածողներն, ի

հարկէ, սխալում են. Եկալի մասին խօսք չի կարող լինել, քանի որ վաճառքի իրաւունք ստանում են միայն արտադրողները. և միջնորդութիւնն ու ազատ առևտուրը արգելւած են: Ո՞տք չի կարող լինել և տնտեսական նոր շրջանի մասին, բայց զերպացի արտադրողները որոշ թիւիւնուցում, ի հարկէ, կունենան, մինչև որ կամկտւոր նորից շունչ առնէ ու դիմէ յարձակման: Այդ քան միայն, ո՛չ աւելի: Մի անձու՛մ էլ զիւղացիական տարրերը զղայնում է իր ոյժը, և խորհրդային իշխանութիւնը հարկադրեա՛ծ նահանջում է նրա առջև:

Անդրկովկասեան չափանիշով՝ կեանքը անցեալ ամսաշրջանում անցաւ զիւսւորապէս վերև յիշւած օրէնքներէ ու հրահանգներէ դործադրութեան, ինչպէս և քարնանացանի ու բամբակացանի խնդիրներով: Այս տարի էլ բամբակացանի ծրագիրը չի իրագործւած ժամ մանակին, իսկ քարնանացանը առ 20 մայիս կատարւած է միայն 75,4% ուլ. Արրբէջանում՝ 92,4%, Հայաստանում՝ 73,5% և Վրաստանում՝ 66,2%: Փորձեր են արւում կոլխոզական առևտուր, բայց զեռ շոշափելի արդիւնք չի ստացւած: Անդրկովկասի հարստացանի խնդիրները վերջուր մեծ տեղ է տալիս... ճագարարուճուճեան, որ կրչւած է լրացնելու մտ պակասը, թերթերի ամբողջ էջը են լեցւում, լայն ուշադրութիւն է բնծալւում ճագարներին, անշուշտ, վաղը մտանալու և օրւայ նոր հարւածային խնդիրը զննելու համար:

